


Ամբաստան

14343

Հայ բողոքական  
ընթացիկ

891.99  
5-99

Բ. 1883





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆ ԿԵՆՏՐ ԳՐԱԳ ԱՃԱՌԱՆՈՑԻ

ՀԱՅ ԲՈՂՈՒԲԱԿԱՆԻ

ԸՆՏԱՆԻՔԸ

2003

Գ Ր Ե Ց

Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ Ո Ւ Ս. Վ Ա Գ Ա Ն Ե Ա Ն Ի Ն Ի Ը Ն Կ. Տ Գ Ր Ա Ր Ը Ն Ո Ւ Մ

1883

391.99  
4-96

89/99

U-99

271

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՏԱՌԱՆՈՑԻ

# ՀԱՅ ԲՈՂՈՒՅՆԿԱՆԻ

## ԸՆՏԱՆԻՔԸ

1001  
2732

Գ Ր Ե 8



## Մ Ո Ւ Ր Ա Յ Ա Ն



Թ Ի Յ Լ Ի Ս

ՄՈՎՍ. ՎԱԳՆԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄ

1883



## ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

## Ա.

Գեկտեմբեր ամսի ցուրտ օրերից մէկն էր: Գեռ վաղ առաւօտ լինելով՝ ամբողջ քաղաքը պատուած էր մշուշով: Քամին անընդհատ փչելով փոթորկում էր իւր հետ տան կտուրների վրայ դիզուած ձիւնը, որի սառած հատիկները զարնուելով երբեմն փակուած պատուհանների ապակիներին մեղմ հնչիւններ էին հանում: Սառուցակապ փողոցների մէջ անցուղարձ գրեթէ չը կար. միայն երբեմն-երբեմն, նրանց այս ու այն ծայրում, սեին էին տալիս եկեղեցին շտապող բարեպաշտ ծերունին կամ պառաւը, որոնց միօրինակ և յամրաքայլ ընթացքը մերթ ընդհատվում էր նրանց երկաթազամ քօշերի սառուցի վրայ սահելուց: Եւ այս շատ անգամ վերջանում էր նրանով որ բարեպաշտ պառաւը ակամայ նստում էր ճանապարհի մէջ տեղը և դժգոհելով անիծում իւր քօշերը գամող գարբնին:

Доз. ценз. Тифлисъ, 17 Ноября, 4 1882 года.

Тип. М. Вартамянца и К-о, прот. Троиц. церк.



Քաղաքի մի լեռ ընկած փողոցում, որ  
գլխաւորապէս աղքատների բնակատեղին էր,  
գտնվում էր մի տնակ: Ամբողջ գիշերը, հա-  
կառակ սովորականին, ճրագը վառվում էր  
այդտեղ: Այդ հանգամանքը կարող էր հետա-  
քրքրել դրացիներին, բայց եղանակի վատթա-  
րութեան և գիշերվան մառախուղի պատճա-  
ռաւ այդ նրանցից աննկատելի մնաց: Միայն  
առաւօտեան պահուն, երբ Խաթուն մայրիկը,  
թաղի ամենաբարի պառաւը, եկեղեցին գնա-  
լու ժամանակ անցաւ տնակի մօտից, շատ  
զարմացաւ երբ ոսկերիչ Գրիգորի ճրագը վառ  
գտաւ: Նա մօտենալով բակի դրանը նայեց  
նրա ծերպերից՝ տեսնելու համար թէ բակում  
անցուղարձ կայ արդեօք: Իայց որքան մեծ  
եղաւ նրա երկիւղը, երբ տան ներսից լսուե-  
ցաւ կանացի լացի մի ողորմելի ձայն: Պառա-  
ւը պատրաստվում էր դուռը բաղխելու, երբ  
բակից նրա ականջին զարկաւ մի ուրիշ աղիո-  
ղորմ մըմունջ, «նիս Աստուած, դարձեալ ծե-  
ծում է»:

Բարի պառաւը երկար չ'սպասեց: Նա ձեռ-  
քը ձգեց դրան մուրճը զարնելու, բայց դու-  
ռը մուրճ չ'ունէր: Սկսաւ քար որոնել գետ-  
նի վերայ, բայց գետինը սառած լինելով նա  
այդ ցանկութեան էլ չը հասաւ, վերջապէս

հանեց ոտքի քօշերից մէկը և նրանով սկսաւ  
ամուր-ամուր բաղխել դուռը:

Իուռը խկոյն բացուեցաւ: Պառաւի առաջ  
արձանացաւ մի տասնևհինգամեայ գեղեցկահա-  
սակ աղջիկ: Նրա դէմքը դրսի ցրտութիւնից  
դալկացել էր և արտասուքը սառել այլագուն-  
ված այտերի վերայ:

— Մանիշակ, այս ժամին ի՞նչ ես շինում  
այս ցրտի մէջ, եղաւ պառաւի առաջին հար-  
ցը: Մանիշակը հեկեկալով ընկաւ պառաւի  
պարանոցով և ոչինչ չը կարողացաւ պատաս-  
խանել:

— Աղջիկ, ի՞նչ եղաւ քեզ. ի՞նչ է պատա-  
հել, խօսի՛ր տեսնեմ:

— Ի՞նչ խօսիմ, մայրիկ, միթէ չը գիտես.  
էլի մօրս ծեծում է... պատասխանեց նա և  
հեկեկանքը խեղդեցին խեղճ աղջկայ ձայնը:

Պառաւը հասկացաւ խկոյն, թէ բանը ին-  
չումն էր:— Իսկ դու ինչո՞ւ այս ցրտի մէջ  
կանգնած ես, հարցրաւ նա:

— Ես կամեցայ մօրս ազատել նրա ձեռքից  
(աղջիկը խօսում էր իւր հօր համար), իսկ  
նա ուժով դուրս հրեց ինձ և դուռը վերաս  
կողպեց: Չօրս ժամ է, որ այս ցրտում կանգ-  
նած եմ ես, բոլոր մարմինս սառել է... վեր-  
ջին բառերը արտասանելիս թշուառ աղջկայ



աչքերից աղբիւրի պէս արտասուքը վազել սկսաւ:

Բարի պառաւի զայրոյթը Հասաւ իւր վերջին աստիճանին: Նա այլ ևս հարցեր չ'արաւ Մանիշակից, այլ նրա ձեռքից բռնելով արագ-արագ մօտեցաւ տան դրանը և ոտքովը ամուր գարնել սկսաւ:

— Բայ դուռը, գոչեց հրամայող ձայնով:

— Ո՞վ է, ներսից լսուեցաւ ոսկերիչ Գրեգորի ձայնը:

— Աչքդ հանողը, անզգամ. դուռը բայց, զայրացած կրկնեց պառաւը: Տանուտէրը ճանաչեց իւր յայտնի դրացուհուն. նա դուռը թողեց փակ և հեռացաւ ուրիշ սենեակ: Պառաւը կրկնեց իւր հարուածները:

— Բաց ասում եմ, անզգամ, թէ չէ կ'երթամ բոլոր ժամաւորներին այստեղ կը հաւաքեմ:

Տանուտէրը այս սպառնալիքից վախեցաւ և շտապեց դուռը բանալու:

Պառաւը ներս մտաւ Մանիշակի ձեռքից բռնած: Նրա աչքերի առաջ նեկայացաւ մի աղետալի տեսարան: Տանտիկինը արտասուլաթոր աչքերով և արիւնոտ երեսով ընկած էր սենեակի մի անկիւնը և հեծեծում էր անգուլթ ամուսնուց ստացած հարուածներից: Երկու

փոքրիկ երեխաներ կիսամերկ անկողնից ելած՝ բռնած էին մօր ծնկներից. մի ուրիշ, նրանցից աւելի հասակաւոր տղայ երեխայ հիւանդ նստած էր իւր անկողնի մէջ և լալիս էր:

Երեխաները իրանց ծանօթ և սիրելի պառաւին տեսնելով, մոռացան հօր երկիւղը և կարծես նրա մէջ իրանց պաշտպանը գտնելով, իսկոյն ցատկեցին տեղից և վաղեցին դէպի նա. «Խաթուն մայրիկ, տես ապպան որքան ծեծել է մայրիկին, ասա որ էլ չը ծեծի, ախար խեղճ է...» Երեխաների գանգատը, որ փոքրիկ սրտերի յուսահատ ապրտամբուլթեան ծնունդ էր, այնքան սրտաշարժ էր, որ պառաւի արտասուքը շարժեցին:

— Տօ անաստուած, դարձաւ նա կատաղի զայրոյթով դէպի տանուտէրը. հերիք տանջես այդ խեղճ կնոջը. այդ ինչ օրի ես հասցրել դրան. բաս դու չե՞ս խղճում այս երեխաներին. ասենք սիրտդ քար է կտրել, խօ ականջներդ էլ չեն խլացել, խօ աչքերդ էլ չե՞ն կուրացել, խօ լսում ես այս ողորմելիների լացն ու կոծը, տեսնում ես նրանց արտասուքը: Տօ, անգուլթ...:

— Լաւ, լաւ, Խաթուն մայրիկ, խօսքը կտրեց տանուտէրը, մի երկարացնիլ. ի՞նչ ես ուզում ասել, ինչո՞ւ համար այս ժամին մտել



ես իմ տունը: Եւ եթէ մտել ես ինչ իրաւունքով հայհոյում ես ինձ: Ես գիտեմ իմ կինը ու երեխաները. խօ դու չես նրանց հաց ու ջուր տուողը...

— Դու հաց ու ջուր չես տալիս մեզ, անաստուած, ողորմելի ձայնով ընդհատեց նրան կինը, քո տուածը թոյն ու լեղի է...

— Զայնդ կտրիր, գոռաց ամուսինը դէպի նա դառնալով:

— Քո ձայնն էլ Աստուած կտրի, մրմընջաց կինը և լռեց:

Պառաւը տեսնելով ոսկերչի անողոք կատաղութիւնը, մօտեցաւ կնոջը, բռնեց նրա ձեռքից, «վեր կաց, Մարիամ», ասաց նրան հրամայողական ձայնով, «վեր կաց, երեխաներդ հաւաքիր գնանք իմ տունը, այս գաղանի մօտ մի մնաք»:

— Ա՛խ, Խաթուն մայրիկ, հօժաց Մարիամը թոյլ ձայնով, դորանով խօ ամէն բան չէ՞ վերջանում:

— Վեր կաց, ասում եմ քեզ, կրկնեց պառաւը:

— Վեր կաց, մայրիկ, վեր կաց գնանք Խաթունենց տուն, այստեղ վախենում ենք, թախանձեցին երեխաները:

— Կորէ՛ք այստեղից, գոռաց հայրը, հրա-

ցայտ աչքերը երեխաների վերայ սեւեւելով. երեխաները սարսափով յետ քաշուեցան և նրանցից իւրաքանչիւրը կծկուեցաւ մի անկիւնում:— Դու էլ վեր կաց գնա քո տունը, պառաւ, դարձաւ նա դէպի Խաթունը, իմ կինը քո կարեկցութեան պէտք չ'ունի, վեր կաց գնա:

— Վեր կենամ գնամ, հարցրաւ պառաւը բարկութիւնից դողացող ձայնով, գնամ որ էլի գազանութիւնդ գործ դնես այս խեղճերի վերայ: Ձէ, դու այլ ես արժանի չես այս երեխաներին ու այս կնոջը տէր լինելու, նրանց մենք կը պահենք, դու բուխ պէս միայնակ պիտի մնաս այստեղ մինչև որ ինքդ քո գլուխդ ուտես: Այս ասելով Խաթունը դարձաւ դէպի Մարիամը, — այ կին, վեր կաց, ասում եմ, ա՛ն երեխաներդ, գնանք այստեղից:

Ոչոք երկիւղից չը շարժուեցաւ: Տանուտէրը սպառնալից դէմքով մօտեցաւ Խաթունին և բռնելով նրա ձեռքից ուժով քաշեց դէպի դուռը. «դուրս գնա, ասում եմ քեզ, դուրս գնա»: Պառաւը շատ աշխատեցաւ ընդդիմանալ, սակայն նրա թոյլ ոյժը չ'օգնեց իւր ցանկութեան: Տանուտէրը նրան դուրս հանեց և դուռը ետեից փակեց:

Այս բանի վրայ Մարիամը և երեխաները



սկսան լալ և աղիողորմ ճիչեր արձակել, կար-  
ծես թէ իրանց միակ պաշտպանը կորուսին:

Եւ այս՝ թշուառութիւններից ամենամեծն  
է, երբ կինը իւր կողակցի և որդիքը իրանց  
հօր դէմ՝ օտարի պաշտպանութիւնն են խնդ-  
րում:

Պառաւր բռնի դուրս հանուելով, զայրացած  
վազեց գէպի եկեղեցին, որը այնտեղին շատ մօտ  
էր: Ժամասացութիւնը արդէն վերջացել էր և  
ժամաւորները դուրս էին գալիս: Նա կանգ-  
նեց բակի մէջ և աշաղակեց. «այ մարդիկ,  
այստեղ ամուսինը իւր կնոջը սպանում է, ի  
սէր՝ Աստուծոյ եկէ՛ք, ազատեցէ՛ք»:

Այս ազագակը ցնցեց ժամաւորներին: Նրանք  
պատեցին իսկոյն պառաւի շուրջը: «Ո՞վ է, ո՞ւր  
է, ցոյց տուր» ամեն տեղից գոչում էին: «Եկէ՛ք  
և ինքներդ տեսէք», պատասխանեց պառաւը  
և առաջ անցաւ շտապով, իսկ ժողովուրդը  
իրար վերայ խռնուելով հետևում էր նրան:

Մի քառորդ ժամից բոլոր եկեղեցին զրեթէ  
ժողովուել էր ոսկերչի բակը: Մի քանիսի  
խնդրանօք Խաթունը համառօտ պատմեց թէ  
բանը ինչումն էր: Այնուհետև ամբօխի միջից  
աւելի տաք-զլուխները գոռում գոչումով  
սկսան տան դուռը բաղխել: Ոսկերչիը այս  
խայտառակութիւնից աւելի յամառուած՝ ոչ

մի կերպ չը համաձայնուեցաւ դուռը բանա-  
լու: Ամբօխի խառնաշփոթ ձայնը աւելի վա-  
խեցրաւ ներսը գտնուող երեխաներին, որոնք  
իրանց բոլոր ուժով սկսան գոռալ:

Նրանց լացի ձայնը և հօր յամառութիւնը  
աւելի և աւելի զրգուում էր ամբօխի զայրոյ-  
թը: Այս տեսնելով վարպետ Սարգիսը, Խա-  
թունի ծերունի բայց դեռ ուժեղ մարդը,  
դուրս եկաւ ամբօխի միջից և մօտենալով փա-  
կուած դրանը հրամայեալ կանչեց. «Գրի-  
գոր, բաց դուռը»: Գրիգորը թէպէտ ճանա-  
չեց ոսկերչիչների համայնքի գլխաւոր — վարպետ  
Սարգսի ձայնը, բայց զարձեալ դուռը չը բա-  
ցաւ: Վարպետ Սարգիսը մի փոքր սպասելուց  
յետոյ հրամայեց իւր մօտը կանգնող երիտա-  
սարդներին. — Տղայք, դուռը կոտրեցէ՛ք»: Եր-  
կու ուժգին հարուածների առաջ դրան փա-  
կանքը կոտրուեցաւ և դուռը ճռնչալով բա-  
ցուեցաւ: Ամբօխը հետաքրքիր և զայրացած  
կամենում էր ներս խուժել, բայց նրան ար-  
գելեցին մի քանի առաջաւոր մարդիկ և ի-  
րանք պառաւի հետ ներս մտան:

— «Ահա այս մարդն է, որ սպանում է իւր  
կնոջը», այս ասելով Խաթունը ցոյց տուաւ  
ոսկերչին, որը սպառնացող դէմքով կանգնած  
էր ներս մտնողների դիմացը: — «Ամբողջ գիշե-



րը ծեծել է նրան. շարունակեց Խաթունը, և մէկը չէ գտնուել, որ թշուառ զոհին ազատէ դրա ձեռքից: Այս խեղճ աղջիկն էլ կամեցել է իւր մօրը պաշտպանել, նրան էլ դուրս է արել և դուռը վերան փակել: Բոլոր գիշերը անցրել է սա դուրսը ցրտում»: Այս ասելով բռնեց նա Մանիշակի ձեռքից, որը ամօթահար կծկուել էր սենեակի մի անկիւնում, և նրան առաջ քաշելով շարունակեց. — «Նայեցէք սրա գոյնին, նայեցէք, կարծես գերեզմանից դուրս հանած լինի: Եթէ մի փոքր էլ ուշանայի, խեղճ աղջիկը դրսումը պիտի սառչէր»: Խաթունի պատմածները վերին աստիճան զրգռեցին վարպետ Սարգսին: Նա մօտեցաւ ոսկերչին և բարկացած ձայնով գոչեց. — «Այ մարդ, ի՞նչ ես ուզում այս խեղճ կնոջից, ինչո՞ւ ես ծեծում նրան»: Ոսկերիչը ոչինչ չը պատասխանեց:

— Բոլորիկ, ինչո՞ւ համար սա ծեծում էր քեզ, դարձաւ նա դէպի կինը մեղմ ձայնով: Համայնքի գլխաւորը բոլոր արհեստաւորների ընտանիքում ընդունվում է իբրև հայր. ուստի Մարիամը չը քաշուեցաւ նրա մօտ բացարձակ խօսարու. նա պատասխանեց. «Վարպետ, ձեզ յայտնի է, որ դա ամբողջ չորս տարի է, որ լուտերական է դարձել, և ամբողջ չորս տարի է, որ

ինձ տանջում է: Ամեն մի եկեղեցի գնալովս, ամեն մի քահանայ իմ տանը ընդունելովս, ամեն մի սուրբի դիմելովս մի մեծ խռովութիւն է ձգել տան մէջ: Ել նախատինք, էլ հայհոյանք չէ մնացել, որ դա իմ գլխին չը թափէր: Եւ ահա մի քանի ամիս է, որ սովորել է ծեծել:

— Բայց այս գիշեր իսկապէս քեզ ինչո՞ւ համար էր ծեծում, հարցրաւ վարպետ Սարգիսը:

— Տեսնո՞ւմ էք, որ երեխաս հիւանդ է, ամենայն պարզութեամբ շարունակեց Մարիամը, ցոյց տալով անկողնի մէջ նստած հիւանդ երեխային, երէկ մոմ-հալող Վարդին բերի երեխայիս սրտին մոմ հալելու. նա ասաց, որ երեխայի հիւանդութիւնը խաչիցն է: Դորա համար ես էլ, մի գառն ունէինք, վերցրի երէկ և մատաղ արի մեր սուրբին: Երբ դա երեկոյեան տուն դառնալով այս բանը իմացաւ, գազանի պէս կատաղեց: Ամբողջ երկու ժամ նախատինք ու հայհոյանքներ թափեց իմ գլխին. երբ ես էլ համբերութիւնից դուրս գալով սկսայ միւսնոյն կերպով պատասխանել իրեն, նա սկսաւ անողորմաբար ծեծել ինձ... և ծեծեց ամբողջ գիշերը... այստեղ արտասուքը խեղդեցին խեղճ Մարիամի ձայնը և նա այլ ևս չը կարողացաւ շարունակել:



Բայց նրա պատմածները ներկայ գտնուողները լսելով, չէին կարողանում զսպել իրանց զայրոյթը: Նրանցից մի քանիսը մինչև անգամ փորձ փորձեցին ոսկերչին ծեծելու, բայց վարպետ Սարգիսը բոլորին էլ արգելեց, և դառնալով դէպի իւր կինը— «Խնթուն, ասաց նրան, վեր առ Մարիամին և երեխաներին և տար մեր տուն, այս մարդը այլևս դրանց տիրութիւն անելու չէ. այսուհետև մենք պէտք է դրանց պահպանենք և յոյս ունիմ, որ աւելի լաւ կը պահպանենք»:

— Եւ ինչո՞ւ չէ, մեր աչքերի լուսի պէտ, պատասխանեց բարի Խնթունը. մի ժամ առաջ ես նոյն էի կամենում անել, բայց այդ անզգամը ինձ տանից դուրս արաւ: Այս ասելով նա մօտեցաւ Մարիամին և ձեռքից բռնելով բարձրացրաւ նրան:

— Աշոտ, դարձաւ վարպետ Սարգիսը դէպի իւր որդին, որը մօտը կանգնած էր, այս հիւսանդ երեխային իւր անկողնով միասին գրկիւր և տուն տար: Դուք էլ գնացէք, դարձաւ նա դէպի Մանիշակը և երկու փոքրիկ տղաները, ձեզանից ոչ ոք թող չը մնայ այս տանը: Բոլորը հնազանդուեցան վարպետ Սարգսի հրամանին: Նրանք պատրաստվում էին դուրս գնալ գրու-

նից, երբ ոսկերիչը նրանց առաջը առնելով գոչեց. «Ո՛ւր էք կորչում»:

— Չը գիտես ո՛ւր, բարկութեամբ մօտեցաւ նրան վարպետ Սարգիսը և թեկիցը բռնելով ուժգին քաշեց դէպի ինքը:

Խնթունը մի ակնթարթումը Մարիամին ու երեխաներին դուրս հանեց տանից: Ոսկերիչը այս տեսնելով աւելի ևս կատաղեց: «Իմ կնոջը ու երեխաներին համարձակվում էք ինձանից խլել» գոռաց նա վարպետ Սարգսի վերայ: Սարգիսը ոչինչ չը պատասխանեց: Նա մի շեշտակի ապտակ տուաւ ոսկերչին, որից սա զլորուեցաւ: «Տղայք, դարձաւ ապա վարպետը դէպի ներկայ եղող երիտասարդները, կապեցէք դրա ձեռները և վերցրէք գաւառապետի մօտ տանելու»: Մի քանի երիտասարդներ իսկոյն կապեցին ոսկերչի ձեռները և դուրս հանելով նրան փողոցը, բռնեցին գաւառապետի տան ճանապարհը:

Բոլոր ամբոխը հետևեց նրանց:

## Բ.

Երջանկութիւնը, որին մարդիկ շատ փոքր են ճանաչում և որին ընդհանրապէս հարուստների ապարանքներումն են որոնում, յաճախ իւր







ամուսինը տեսնելու համար: Մարիամը գիմա-  
ւորում էր նրան միշտ անուշ ժպիտը երեսին: Երիտասարդական սիրոյ խանդաղատանքը, այս  
ժայռերի քաղաքում, նկատվում է իբր մեղկու-  
թեան նշան. և շատ հազիւ է պատահում,  
որ փեսան կարողանար գէթ իւր մօր կամ  
քրոջ ներկայութեամբ իւր նորատի հարսին  
համբուրել, բայց երիտասարդ ոսկերչի և իւր  
Մարիամի սէրը այնքան վառ և բորբոքուած  
էր, որ նրանք չէին կարողանում համարձակ  
չանել այդ: Չը նայելով որ ոսկերչի մեծ մօ-  
րաքոյրը, Թագուհի-տատը, որը անորդի պառա-  
ւած լինելով մնում էր իւր քեռորդոց տանը,  
միշտ խրատում էր նրանց այդպէս չը վարուիլ,  
որովհետև գրացիները կարող էին այդ բանը  
տեսնել և նրանց բամբասել, այսուամենայնիւ  
ոսկերչին ու իւր կիներ միշտ մնում էին միև-  
նոյնը:

Թագուհի-տատը շատ անգամ նրանց այդ,  
ըստ իւր կարծեաց, աններելի յանցանքից դար-  
ձնելու համար պատմում էր իւր երիտա-  
սարդական կեանքի պատմութիւնից այնպիսի  
կտորներ, որոնք իւր կարծիքով մեծ ազդեցու-  
թիւն կարող էին անել ամուսնի բարքի վե-  
րայ: Օրինակ նա պատմում էր, որ մի անգամ  
իւր ամուսինը շուկայից դարձաւ տուն աղւու-

խով միսը ձեռքին, բայց դեռ բակը չը մտած,  
փողոցից կանչեցին նրան: Եւ որովհետև այդ  
միջոցին ինքը գտնվում էր բակի մէջ, ամու-  
սինը միսը իւր ձեռքը տուաւ և դուրս գնաց:  
Երևակայեցէք, շարունակում էր Թագուհի-տա-  
տը, միսը ես տուն բերի, բայց սկեսուրս երբ  
իմացաւ, որ ամուսինս իւր բերած միսը ուղղա-  
կի իմ ձեռքն է տուել, նա այն մտից մի կտոր  
անգամ չը կերաւ և մի ամբողջ շաբաթ ինձա-  
նից և իւր որդուց—հանգուցեալ Ղազարից,  
խռով մնաց:

Այս և սրա նման խրատական օրինակներ շատ  
էր բերում Թագուհի-տատը քանի որ նա կեն-  
դանի էր, բայց Գրիգորի ու Մարիամի վրայ,  
ինչպէս ստացինք, ոչինչ ազդեցութիւն չէին  
կարողանում անել: Երկու նորատի ամուսին-  
ները սիրում էին միմեանց այնպէս, ինչպէս  
հրամայում էր նրանց բնութիւնը և ինչպէս  
կամենում է բանաստեղծը:

Այսպէս, քանի որ նրանք որդի չ'ունէին ապ-  
րում էին իբրև ամենախանդակաթ ամուսին-  
ներ. իսկ երբ մի երկու տարուց լետ ծնաւ նրանց  
Մանիշակը, նրանց սիրոյ անգրանիկ պտուղը,  
նրանք սովորեցին ապրել և իբրև կատարեալ  
ծնողներ: Գրիգորը իւր արհեստի շնորհիւ բա-  
ւական լաւ վաստակ ունէր, և նրա կէսը



այժմ կարողանում էր խնայել ապագայի համար: Մարիամը քիչ չէր օգնում նրան այդ խնայողութեան գործի մէջ: Նրանց այս երջանիկ դրութեան վերայ անցան և մի քանի տարիներ և նրանք ունեցան դարձեալ երեք տղայ զաւակներ: Նրանցից իւրաքանչիւրի աշխարհ զալովն նորանոր ուրախութիւններ էին աւելանում նրանց համար: Միւս կողմից էլ հետզհետէ բարւոքվում էր նրանց նիւթական վիճակը: Ոսկերիչ Գրիգորը իւր ամուսնութեան տասներեքերորդ տարում, իւր և ամուսնու խնայողութեան շնորհիւ, արդէն ունէր մի երեք հազար ռուբլ, մի գումար, որ արհեստաւորի համար հարստութիւն է համարվում:

Այժմ նրանց ոչինչ չէր պակասում: Երկու ամուսինները շատ անգամ նայում էին իրանց շուրջը, և երբ տեսնում էին հրեշտակի պէս գեղեցիկ մետասանամեայ դուստրը, երեք սիրուն և կայտառ տղաները և այս բոլորի հետ յիշում էին իրանց անկարօտ վիճակը, հրճվում և փառք էին տալիս Աստուծուն: Ամբողջ 13 տարի նրանց ամուսնութիւնից յետ դեռ մի դժգոհութիւն կամ գժտութիւն չէր խռովել նրանց ընտանեկան խաղաղութիւնը և երկու ամուսններից ոչ մէկի անախորժ վարմունքը չէր կնճռել միւսի ճակատը:

Գրացիները երանում էին նրանց, և ով որ ճանաչում էր մանաւանդ նրանց առտնին կեանքը, համոզվում էր որ նրանք երջանիկ էին...

Բայց, կարծես թէ այդ երջանկութիւնը հասել էր իւր կեանքի լրման, և նա տեղի պիտի տար իրանից միշտ անբաժան, բայց և միշտ ատելի ընկերին—թշուառութեանը:

187\* թուականի յունվար առաջին օրն էր: Սյդ օրը մեր երջանիկ ամուսինները ողջունում էին իրանց ամուսնութեան տասն և չորրորդ տարին: Կէսօրին մօտ էր: Գրիգորը վերջացնելով իւր նոր տարուայ առթիւ տուած այցելութիւնները՝ դարձաւ տուն: Նախընթաց օրը տեղի ունեցած պայմանադրութեան համաձայն, այսօր Գրիգորի մօտ պէտք է ճաշէին իւր համարուեստ բարեկամները: Մարիամը բոլոր հարկ եղած պատրաստութիւնները տեսել էր իւր ամուսնու հիւրերին պատուելու համար: Չը նայելով որ օրը պահոց էր, այնուամենայնիւ նրա խոհանոցը արտադրել էր կերակուրների մի քանի տեսակները: Մի քանի աննշան պակասութիւններն էլ Գրիգորի արած նկատողութիւններովը լրացան, և այժմ նրանք անհամբեր սպասում էին հիւրերի զալտեանը:



Կէսօրը լրացաւ թէ չէ, Գրիգորի բարեկամները խօսելով ու ծիծաղելով խմբովին ներս թափուեցան տան բակը: Նրանք բոլորն էլ հոգւոյ ամենաուրախ տրամագրութեան մէջն էին, որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը իւր այցելութեանց ժամանակ առնուադն մի հինգ բաժակ օղի վայելած էր: Կենաց ջրի այսպիսի մի քանակութիւնը բաւական է արհեստագորին մոռացնել տալու աշխարհի մէջ թշուառութիւնների գոյութիւնը:

— Գրիգոր, քեզ համար մի նոր հիւր եմ բերել, գուարթ ձայնով կանչեց նրա արհեստակիցներից մէկը:

— Գլխիս վերայ տեղ ունի: Կարօջան, որքան շատ՝ այնքան լաւ, պատասխանեց Գրիգորը:

— Գլխիդ վերայ տեղ չը կայ, գլուխդ քեզ լինի, սենեակիդ մէջ տեղ տուր մեզ, ծիծաղելով պատասխանեց Կարօն և ներկայացրաւ նրան իւր բերած հիւրին:

Գրիգորը սեղմեց երկուսի ձեռները:

— Գրիգոր, ճանաչում ես Կարօի հիւրին, մօտենալով հարցրաւ նրան մի կարճահասակ և թխադէմ երիտասարդ:

— Ի՞նչպէս չէ, մեր կնքահօրենց Աւետիքն է. ինչո՞ւ չը ճանաչեմ:

— Տես՞ որ չը ճանաչեցիր:

— Ի՞նչպէս թէ չը ճանաչեցի, աչքերս խօզրաւ չեմ դրել:

— Ի հարկէ չը ճանաչեցիր, խմբի միջից ձայն տուաւ վարպետ Օհանէսը, որի գլուխը բաւական մեծ ծաւալ էր բռնում իւր ուսերի վերայ:

— Եղբայրներ, եթէ մեզանից մէկը արբած է, այդ ես չեմ. դուք էլ գիտէք որ ես օղի չեմ խմում, պատասխանեց Գրիգորը մի փոքր վրդովուած:

— Ի՞նչ էք կուռում, մէջ մտաւ քթատաշամբարձումը, որին կարճ քիթ ունենալուն համար այդ անունով էին կոչում, երեքը էլ միմեանց չէք հասկանում: Եղբայր, գարձաւ նա դէպի Գրիգորը, հաշտեցուցչի համոզիչ ձայնով, դու գիտես որ մեր Կարօն լուսերական է, է՛հ, Աւետիքն էլ սրա վարժապետն է: Հիմա սրանք որ հարցնում են թէ ճանաչում ես Կարօի հիւրին, կամենում են ասել՝ գիտե՞ս որ նա սրա վարժապետն է թէ չէ, ահ՛ս սրանց հարցի միտքը, այժմ հասկացա՞ր:

— Ի հարկէ հասկացայ. դէհ այդպէս խօսացէք է՛, հեր-օրհնուածներ:

— Ա՛ն, չպէ՞տք է շնորհք ունենան այդպէս խօսալու համար, կրկնեց քթատաշամբարձումը ինքնաբաւական ծիծաղով:



— Խօսք չը կայ, շնորհքդ էլ այնքան մեծ է, որքան քիթդ, կցեց վարպետ Օհանէսը ծիծաղելով:

— Իսկ քոնն էլ երևի այնքան է մեծ որքան գլուխդ, կրկնեց Համբարձումը և ծիծաղը ընդհանրացաւ խմբի մէջ:

— Բաւական է, բարեկամներս, ձայն տուաւ Քրիզորը, ճաշի ժամանակ է, ո՛ր էք այդքան երկար կանգնում այդ ցրտի մէջ. ներս հրամեցէք, սեղանը ձեզ է սպասում: Այս ասելով նա առաջ անցաւ և հիւրերը հետևեցին նրան:

Բաւականին ընդարձակ սենեակը, որ պատրաստուած էր հիւրերի համար, փայլում էր մաքրութեամբ: Երեք երկար գոյնզգոյն գորգեր, որոնք ծածկած էին սենեակի յատակը, երկու սեղաններ, մի քանի աթուռներ և մի հնատարազ հալելի լրացնում էին սենեակի պարզ զարդարանքը: Հիւրերի համար, գորգերի վերայ զուգահեռական դիրքով ձգուած էին երկու երկար օթոցներ, որոնք ծառայում էին ախոռների փոխարէն և որոնց վերայ ծալապատիկ շարուեցան մեր հիւրերը:

Փոքր ժամանակից յետ Մանիշակը ներս մտաւ իւր հօր աշակերտ Աշոտի հետ, իւրաքանչիւրի ձեռքը մի-մի սկուտղ զանազան պնակներով: Նրանք միասին տարածեցին կա-

պոյտ ծաղկէնկար սփռոցը հիւրերի առաջ, կարգաւորեցին նախաճաշի պնակները, զինու շիշերը և ապա հետզհետէ ներս էին բերում կերակրի բաժինները: Արհեստաւոր դասը առհասարակ ծառայ չէ ունենում. նրա տանը հերթով օգնում են իւր արհեստի աշակերտները: Այսօր հերթը Աշոտինն էր, որի հայր վարպետ Սարգիսը նույնպէս հրաւիրած էր այսօր ոսկերչի տանը:

Վարպետ Սարգիսը տեսնելով թէ ի՞նչ սիրով սպասաւորում էին հիւրերին երկու հասակակից երեխաները, երկար նրանց դիտելուց յետ դարձաւ դէպի տանուտէրը. «Քրիզօ՛ր, ասաց նրան, մեր արհեստակիցների ներկայութեամբ ես մի խնդիր եմ առաջարկելու քեզ, պէտք է ընդունես»:

— Հրամայիր վարպետ, պատրաստ եմ կարողութեանս չափ քեզ ծառայելու, համեստութեամբ պատասխանեց Քրիզորը:

— Օրհնեալ լինիս, ուրեմն լսիր. ես կամենում եմ, որ քո Մանիշակը իմ Աշոտի հարսնացուն լինի, և հէնց այսօրուանից մենք խնամիներ զառնանք: Իմ Աշոտը 14 տարեկան է, քո Մանիշակն էլ 11 ից աւելի չէ. 5 կամ 6 տարիից յետոյ մենք, եթէ կենդանի մնանք, նրանց կը պսակենք: Ի՞նչ կ'ասէք, տղայք, զարձաւ նա



դէպի հիւրերը. վատ առաջարկութիւն խօսեմ անում:

«Աստուած շնորհակարանի, գոչեցին հիւրերը միաբերան, մենք մեր կողմից յօժար ենք»:

— Գուրը որ յօժար էք, ես ինչ խօսք ունիմ, պատասխանեց Գրիգորը քաղցրութեամբ և սեղմեց վարպետ Սարգսի ձեռքը, որ նա պարզել էր դէպի իրեն:

— Հապա մայրը, մէջ մտաւ կնքահօրենց Աւետիքը, որը ըստ երևութին կանանց դատը պաշտպանողներից էր:

— Մայրը ինձ հետ միշտ համաձայն կը լինի, իմ և նրա կամքը մէկ է, պատասխանեց Գրիգորը:

«Ուրեմն առաջին բաժակը կը դատարկենք Մանիշակի ու Աշոտի կենացը», գոչեցին հիւրերը միանգամայն և դատարկեցին բաժակները:

Մի ապագայ ամուսնութեան դաշը կուռած էր: Եւ որովհետև նա համայնքի կամքովն էր, ուրեմն և անքակտելի էր:

Սեղանի վերայ հետզհետէ բարդվում էին կերակուրները. գինու բաժակները արդէն սովորական արագութեամբ պտտվում էին և ուրախութիւնը սկսել էր դառնալ հասարակաց:

— Զարմանալի սովորութիւն կայ ձեր մէջ, խօսել սկսաւ կնքահօրենց Աւետիքը. երբ

հաւաքվում էք մի տեղ ուրախանալու, անպատճառ պէտք է կամ մի տղայի նշանէք կամ մի աղջկան, մեծ լինի թէ մանուկ, բնաւ ուշադրութիւն չէք դարձնում: Լաւ, դիցուք թէ տղան ես եմ, մեծացալ ու աղջկանը չը սիրեցի, կամ աղջիկը իւր կողմից սկսեց ատել տղային, այն ժամանակ խօսողով չէք կարող ամուսնացնել: Եթէ անէք էլ նրանց կը թշուառացնէք:

— Աստուծոյ ողորմութեամբ մինչև այսօր այդպիսի բան չէ պատահել, պարոն Աւետիք, մէջ մտաւ վարպետ Սարգիսը, թէ Աստուածդ կը սիրես, բարի բանի մէջ քար մի գցիլ:

— Ինչո՞ւ եմ քար գցում, ես ձեր վատ սովորութեան համար եմ խօսում:

— Եղբայր, այստեղ ոչինչ վատութիւն չը կայ, մէջ մտաւ միւս կողմից քթատ Համբարձումը, ուրախութեան տեղին էլ ուրախ բաների վերայ կը մտածեն, կը խօսեն, էլ ուրիշ ինչ պիտի անեն:

— Ի հարկէ, ի հարկէ, գոչեցին շատ տեղերից հիւրերը. Համբարձումը իրաւունք ունի, էլ ուրիշ ինչ պիտի անենք:

— Որ այգպէս է, Համբարձումի կենացը, կանչեց վարպետ Օհանէսը. որը իւր համայնքից ցմահ անփոփոխ մատուռակ էր ընտ-



րուած. «Համբարձումի կենացը», կրկնեցին հիւրերը և դատարկեցին բաժակները: Համբարձումը ինքն իրեն հրճվում էր, որ իւր նշանաւոր նկատողութեամբը արժանացաւ հասարակութեան առանձին ուշադրութեանը: Բայց Աւետիքը տեսնելով որ ճիշդ իւր որսի տեղն է ընկել, շահաւոր չէր համարում լռել, ուստի նորէն սկսաւ խօսել:

— Պարոն Համբարձում, դուք սխալվում էք կարծելով որ ուրախութեան տեղը միշտ դատարկ ուրախութիւն պէտք է անէք: Ընդհակառակն ամեն մի ուրախութեան տեղ ամենից առաջ մի աւելի լաւ բան կա՛յ անելու, և առաջ այն պիտի անէք:

— Ի՞նչ բան, հետաքրքրութեամբ հարցրաւ Համբարձումը:

— Ա՛յն, որ առաջ այս սեղանը ու կերակուրները մեզ պարզեւող «Տիրոջ» անունը լիջէք: Այս ասելով նա մատը բարձրացրաւ դէպի երկինքը:

— Իրաւունք ունիք, եղբայր, յաղթուած ձայնով գոչեցին հիւրերը. ախար մենք հացի նստանք առանց սեղանը օրհնելու»:

— Ա՛յ այն այն, դժգոհութեամբ գլուխը շարժեց վարպետ Սարգիսը, և սկսաւ օրհնել սեղանը.

«Անուն Հօր և Որթոր և Հոգոյն Սրբոյ: Հայր մեր որ կինս. սուրբ եղեցի անուան քո. երգեսցէ արքավութիւն քո. եղիցեն կամք քո որպէս երկիրս և երկրէ. զհարս մեզ հանապազ զօրթ սուր մեզ այսօր. և թող մեզ զպարտս մեզ, որպէս թողունք մերոց պարտապանաց. և մի տանիլ ի մեզ ի փորձութիւն. այլ փրկեա իզի չարէն, զի քո է արքավութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենիս, ամէն »: Վարպետ Սարգիսը իւր աղօթքը վերջացնելուց յետ հանգիստաւոր կերպով խաչ հանեց երեսին, որին հետեւեցին և բոլոր հիւրերը բացի Աւետիքից և Կարօից: Բայց այս բանը նրանց բաղտից հիւրերից ոչ ոք չը տեսաւ:

— Դէ՛հ, «Տիրոջ» անունն էլ տուինք, այժմ խօ կարող ենք ազատ ուրախութիւն անել, դարձաւ Համբարձումը Աւետիքին:

— Ես ձեր ուրախութիւնը բնաւ չեմ արգելում: Ես ասացի «Տիրոջ» անունն էլ պիտի յիշէք...

— Բաս չը յիշեցի՞նք:  
— Դուք միայն Տէրունական աղօթքն ասացիք, և այդ ձեր պարտքն էր որ մոռացել էիք, այլ իմ պահանջածս ուրիշ էր:

— Ո՞րն է, որը:  
Հայ, որն է ձեր պահանջածը, ասա, այս րո-



պէին կատարել տամ, հանդիսաբար գոչեց վարպետ և մատուռակ Օհանէսը:

— Ա՛յ թէ ինչ:

— Հա՛ տեսնենք ի՞նչ է ասում ֆարմասօնը, գուարձուլթեամբ կրկնեցին մի քանի հիւրեր գինու բաժակները ձախ ձեռքով բռնած ի պատիւ նրա: Աւետիքը պատրաստվում էր բերանը բանալ թէ չէ,

— Սպասիր, սեղանի միւս ծայրից խօսաց մի ճաղատ գլուխ, եթէ ասելու ես գինի մի խմէք, կամ թէ քիչ խմեցէք, այժմեանից գգուշացնում եմ քեզ որ չը խօսաս:

— Հա՛, հա՛, իրաւ է ասում, կրկնեցին ձախ ձեռքով բաժակ կրողները: Աւետիքը տեօնում էր, որ դիտմամբ իրեն խանգարում էին, բայց քարոզչի համար այդտեսակ արգելքները նշանակութիւն ունէին:

— Սիրելի եղբայրներ, սկսաւ Աւետիքը, դուք գիտէք...

— «Եղբայրներ» մի՛ ասիր մեզ թէ Աստուածդ կը սիրես, իսկոյն խօսքը կտրեց Համբարձումը:

— Ի՞նչպէս, ապա մենք բոլորս էլ «եղբայրներ» չե՞նք, զարմացմամբ հարցրաւ Աւետիքը:

— Ո՛չ, քեզ հետ «եղբայրներ» չենք:

— Տօ ի՞նչ ես լիմար-լիմար դուրս տալիս,

Համբարձումի վրայ զարմացաւ մատուռակը, թո՛ղ մարդը խօսի տեսնենք ի՞նչ է խօսում է:

— Ի հարկէ, վրայ բերաւ մեզ ծանօթ ճաղատ գլուխը, որի քիթը շատ խմելուց ամբուկի (պատիրշանի) գոյն էր ստացել. թո՛ղ խօսի, գուցէ Աստուած գլխին խռովում է ու մի լաւ բան է ասում:

— Ախր դու չը գիտես, վարպետ Օհանէս, իրեն արդարացնում էր Համբարձումը, սրանք իրանց լուծէրականներին են «եղբայր» կանչում. մենք էլ խօ լուծէրական չե՞նք:

Աւետիքը Համբարձումի այս բացատրութեանը պատասխանեց միմիայն մի ժպտով:

— Ա՛յ թէ ի՞նչ են սովորեցնում ձեզ ձեր քահանաները, հանդարտութեամբ շարունակեց Աւետիքը խօսքը ուղղելով միւսներին: Աստուծոյ տուած «եղբայր» բառն էլ չեն ուզում որ արտասանէք, ու հազար մի նշանակութիւն են տալիս նրան:

— Հոգուդ մեղք ես անում, պարոն Աւետիք, խօսքը կտրեց վարպետ Սարգիսը. մեր քահանան որ Տէր-Արիստակէսն է, այդպէս բան մեզ ասած չ'ունի. հոգի ունիմ տալու Աստուծոն:

— Այդ միւսնոյն է. այդ չէ ասում բայց դրա նման շատ բաներ է ասում: Զորօրինակ, նա ասում է Աստուծոյ տուած իւղն ու պա-



նիրն մի ուտէք, որովհետև պաս է. այս էլ միևնոյն չէ՞:

— Է՛հ, դրանով ի՞նչ էք ուզում ասել, պ. Աւետիք, ծանրութեամբ հարցրաւ վարպետ Սարգիսը, հասկա քո ասելով պահէ էլ չը պահենք:

— Պահէք ի հարկէ պէտք է պահէք, որովհետև Տէրն ասում է— «այս դէը ոչ մի բանով դուրս չի գալ, բայց միայն պահէքով և աղօթքով». բայց պահէքը որ լսել էք այն չէ ինչոր դուք էք պահում, կամ ինչ որ ձեր քահանաներն են քարոզում:

— Ախար չ'ասացի թէ դրան մի բառ եթէ թոյլ տաք խօսելու, հազարն էլ յետոյ կը խօսի, անհամբերութեամբ ներս ընկաւ Համբարձումը:

— Տօ անպիտան, քեզ չ'ասացի՞ թէ լռիր, տեսնենք մարդը ի՞նչ է խօսում, բարկացաւ նրա վրայ մատուակը:

— Իմ կարծիքով, խօսաց Աւետիքը, Համբարձումը մեզ խառնում է նրա համար, որ գինի խմելը դադարեցրել էք: Ես ձեզ խորհուրդ կը տամ, պ. մատուակ, որ նրան միանուակ Յ բաժակ գինի տաք խմելու, իբր պատիժ:

Մատուակը հրամայեց և Համբարձումի

մօտիկ ընկերը երեք բաժակ լցնելով առաջարկեց նրան: Վերջինս ներքին բաւականութեամբ և արտաքին դժգոհութեամբ երեք բաժակները դատարկեց:

Աւետիքի խարդախութիւնը ոչոք չ'իմացաւ. նա կամենում էր իւր հակառակորդին արբեցնելով թուլացնել, որը որքան էլ չ'իմարաբար էր խօսում, դարձեալ իրեն խանգարում էր: Բայց սխալուեցաւ:

— Այժմ կարող էք խօսալ, ես կը լռեմ, յայտարարեց Համբարձումը բաժակները դատարկելուց յետ:

— Հնա, սկսաւ Աւետիքը, այն էի ասում, թէ քահանաները ուղիղ պահէ պահելը չը սովորացնելով՝ ձեզ խաբում ու մոլորեցնում են:

— Հիմա այստեղ ես ի՞նչպէս դիմանամ, գլուխը շարժելով խօսեց ինքն իրեն Համբարձումը, հիմա էլ մեր քահանաներին խաբեբայ է անուանում:

— Յարգելի պարոն Համբարձում, խոնարհ ձայնով դարձաւ Աւետիքը դէպի նրան, դուք դարձեալ դժգոհութիւն էք ցոյց տալիս. ես տեսնում եմ որ դուք շատ նուրբ հասկացողութիւն ունիք և ինձ շուտով կ'ըմբռնէք. թողէք խօսիմ. եթէ սխալ կը գտնէք խօսածիս մէջ, կարող էք ինձ լռեցնել:



Սա երկրորդ զէնքն էր:

Այս խոնարհ խօսակցութեան եղանակը Համբարձումի ինքնասիրութիւնը գգուեց, և նա խոստացաւ լսել: Աւետիքը սկսաւ:

— Եթէ ես ասում եմ, թէ ձեր քահանաները ձեզ մոլորեցնում են սխալ ճանապարհներ տանելով, դուք նեղանում էք: Տեսէք. դուք միշտ միմեանց հայհոյում էք, բամբասում էք, զրպարտում էք, թշնամութիւն էք անում, միմեանց տուն քանդում էք, բայց այս բոլորի համար ձեր քահանան ձեզ չի ասում թէ մեղք է, մի անէք, այդ բանից պահք պահեցէք, այլ ընդհակառակը իւր ու միս ուտելից է ձեզ զգուշացնում: Սա մոլորեցնել չէ: Այստեղ իւրով փլաւի տեղ՝ ձէթով էք ուտում, իսկ այնտեղ գնում ընկեր-ընկերի միս ուտում. սա ինչի՞ նման է:

— Ես իմ Աստուածը շատ լաւ է ասում պարօն Աւետիքը, ընդհատեց նրան մատուռակը, վայ մեր մեղացը:

— Հն, ի՞նչ խօսք ունիս սրան, պ. Համբարձում, — հարցրաւ նրան տանուտէր Գրիգորը, որին ըստ երևութին շատ դիւր էին գալիս Աւետիքի խօսքերը, — սուտ է ասում թէ՞ ճշմարիտ:

— Ես ի՞նչ գիտեմ, սո՛ւտ է ասում թէ ճշմար

րիտ—կէս բարեկամութեամբ պատասխանեց Համբարձումը, — պէտք է մեր վարժապետ Յարութիւնը այստեղ լինէր, որ դրա խօսածների միտքը իմանար: Այսքան գիտեմ, որ դա իւր կեանքում ոչինչ լաւ բան չի խօսիլ. ինչ էլ խօսի՝ մեր սուրբ հաւատի հակառակ:

— Այո՛, շարունակեց Աւետիքը, բնաւ ուշադրութիւն չը դարձնելով Համբարձումի խօսածներին, ձեր մէջ հազարաւոր պակասութիւններ կան, որոնց չեն ուզում ուղղել ձեր քահանաները, որովհետեւ նրանք չեն ուզում ձեր աչքերը բանալ: Զեզ խաւարի մէջ պահելով իրանք միշտ աւելի կը շահուին: Զեր մէջ հարիւրաւոր ընտանիք քաղցից մեռնում են, դուք նրանց չէք մօտենում, նրանց կարեկից չէք լինում, նրանց ցաւերը չէք մեղմում, և այդ բանի համար ձեր քահանան ձեզ ոչինչ չէ լիջեցնում, որովհետեւ եթէ սխալուի և լիջեցնի, ի հարկէ իւր բաժինը դուք կ'առք այն խեղճերին: Այսպէս, ձեր հոգևոր հայրերը ձեզ հետ ամէն բան հաշուով են գործում, և իրանց օգտի համար ձեր հոգիները դժոխքի բաժին են դարձնում:

Աւետիքի այս խօսքերը լուռ լսում էին բոլոր հիւրերը, միայն Համբարձումի համար



իւր լուսթիւնը շատ երկար թուաց, նա քարոզչին ընդհատեց:

— Ի՛նչ բաւական է, ի սէր Աստուծոյ, այստեղ ժամ չե՛ս շինելու. քարոզ ունիս զնա քո «եղբայրներիդ» քարոզիր:

— Ի՛նչ էլ իմ «եղբայրն» ես, յարգելի պարոն Համբարձում, ուստի...

— Աստուած ոչ անէ, որ ես քո «եղբայրը» լինիմ, այն ժամանակ ես էլ քեզ նման մի անամօթ մարդ կը լինիմ:

— Համբարձում, հրամայող ձայնով դարձաւ նրան տանտէր Գրիգորը, ինչո՛ւ Համար Հայհոյում ես իմ հիւրին:

— Շատ լաւ եմ անում. եթէ դու էլ քո հիւրի քարոզներին հաւանում ես, զնա նրա աղօթարանը, քեզ էլ այնտեղ ֆարմասօն կը մկրտեն:

Աւետիքը հրճվում էր Համբարձումի կոպտութիւնները տեսնելով տանտիրոջ հետ, որովհետեւ համոզուած էր որ դորանով վերջինս իւր կողմը կ'անցնի: Բայց կամենալով մատուակիին էլ գրգռել, ասաց. — Չարմանում եմ, որ պարոն մատուակի ներկայութեամբ այդ Համբարձումը կարողանում է այդպէս անպատիժ անկարգութիւններ անել. միթէ մենք բոլորս էլ այժմ նրա խոնարհ հպատակները չենք:

— Ո՞վ է այդ խռովարարը, պէտք է դուրս հանէք այստեղից, կարծես քնից արթնած գոչեց մատուակը:

— Այո՛, այո՛, պէտք է դուրս հանել, գոչեցին մի քանի տեղերից հիւրերը և միաբերան հաստատեցին, որ խռովարարը Համբարձումն է: Ուստի մատուակի հրամանաւ զօռով դուրս հանեցին նրան միւս սենեակը և ստիպեցին որ քնէ ու հանգստանայ: Չը նայելով որ խեղճ Համբարձումը կաշից դուրս էր գալիս համոզելու համար, որ ինքը չէ խռովարարը, այլ այն ֆարմասօնն է, որ ուր մտնում է երկպառակութիւն և բաժանումն է գցում, այստեղանայնիւ նրա ճիգը զուր անցաւ, սենեակի դուռը վերան փակուեցաւ և նա ստիպուած էր ժողովի վճիռը կատարելու համար կամայ-ակամայ այդտեղ քնանալու:

Քարոզիչը այժմ ազատ շունչ քաշեց:

— Ահա, սիրելի եղբայրներս, նորէն սկսաւ նա խօսել՝ երբ խռովարարը մէջ տեղից բարձուեցաւ, ձեր հոգևոր հայրերը այսպէս են խնամում իրենց յանձնուած հօտի անդամները: Ի՛նչք մեզ աւետարանական ու ֆարմասօն անուանելով մեզ վերայ ծիծաղում էք, բայց մեր «եղբայրների» մէջ այստեսակ խռովարար մարդիկներ չէք կարող գտնիլ: Նրանք միշտ



հեզ են, բարի, ողորմած, աղքատասէր, միով բանիւ այնպէս՝ ինչպէս հրամայում է նրանց լինել մեր «Տէրը»: Եւ մենք մեր «Տիրոջ» սուրբ կամքից երբէք չենք շեղվում:

Այնուհետեւ քարոզիչը նորէն դարձաւ պատիւն, սուրբերին, պատկերներին և մեր եկեղեցու զանազան արարողութեանց և ծէսերին: Երկար ու բարակ խօսեց և ըստ կամաց հազար և մի սուտ ու սխալ բացատրութիւններ տուաւ այդ ամենի համար: Յետոյ նա իւր կարծիքով այնքան պակասութիւններ գտաւ մեր հոգևոր հայրերի մէջ, այնքան թերութիւններ մեր կրօնի ու եկեղեցու մէջ, որ իւր ունկնդիրներից մի քանիսներին, ի միջի այլոց և ոսկերիչ Գրիգորին, համոզեց, որ իրանք բոլորն էլ մոլորեալ ոչխարներ են, արդէն դժոխքի համար պատրաստուած, որովհետեւ արքայութիւն մտնելու համար նորէն պէտք է «եղբայրութիւն» ընդունէին, այլապէս անհնար էր: Քարոզիչը իւր բոլոր խօսակցութեան ժամանակ աշխատում էր խեղճ և տգէտ արհեստաւորների առաջ այնպիսի բաներ խօսել, որոնց հետ վերջիններս շատ ծանօթ էին. և որովհետեւ այդ խեղճ մարդիկը նրա ասածների միմիայն երեսն էին տեսնում, առանց խորը թափանցել կարողա-

նալու և մանաւանդ որ սա կրկնում էր մեր այն թերութիւնների մասին, որոնց մենք ինքներս շատ անգամ հարուածում ենք, այս հանգամանքը մանաւանդ օգնում էր, որ մի քանիսը բոլորովին յափշտակուել էին իւրմով: Ինչ վերաբերում է ոսկերիչ Գրիգորին, նա սրան երկնքից իջած էր համարում: Հիւրերից հասակաւորները միայն գինու առատութիւնից թմրել և լսելու ու հասկանալու անընդունակ էին դարձել, միւս բոլոր երիտասարդները արդէն բաւական խմորուել էին:

Աւետիքի զգացած ուրախութեան չափ չը կար: Նա խօսելուց և քարոզելուց այն ժամանակ դադարեց, երբ ճրագները ներս բերին: Այնուհետեւ հիւրերի ցրուելու ժամանակն էր: Երբ հերթը եկաւ Աւետիքին՝ նա վերկենալով յայտարարեց, որ այսուհետեւ կ'աշխատէ շուտ-շուտ տեսնուել իւր այս օրուայ բարեկամների հետ, որոնց նմաններին նա դեռ պատահած չէր, ինչպէս ասում էր, և կը խօսի «հոգեշահ» բաների վերայ: Ոսկերիչ Գրիգորը և իւր մի քանի ընկերները ուրախութիւն յայտնեցին նրա «հոգեշահ» քարոզներին ներկայ գտնուելու ուր և լինի:

Բայց քարոզչի աշակերտ Կարօն աւելի լաւ բան առաջարկեց, այսինքն վաղը երեկոյեան



Ժողովուրդի իւր տանը ընթրիքի: Ներկայ եղողները պարտաւորուեցան բոլորն էլ այնտեղ գտնուել մի ուրիշ ժամում, և միմեանց «բարի գիշեր» մաղթելով հեռացան:

Գրիգորը հիւրերին ճանապարհ դրաւ մինչև բակի դուռը: Երբ գարձաւ տուն, Մարիամին գտաւ շատ տխուր և առանձնացած սենեակի մի անկիւնը:

— Մարիամ, ինչո՞ւ տխուր ես, ըստ սովորականին քնքշաբար մօտեցաւ նրան Գրիգորը, մի՞գուցէ հիւանդ ես:

— Ոչ, հիւանդ չեմ:

— Ուրեմն բարկացած ես:

— Այո՛, քեզ վերայ:

— Ի՞նչ, հայ, հայ, հայ, ինչո՞ւ համար, միթէ քո դէմ մի անախորժ բան ունիմ արած:

— Այո՛, շատ անախորժ: Ո՞վ է այդ Աւետիքը, որի շատախօսութիւնները այդքան զմայլուած լսում ես:

— Ո՞վ պէտք է լինի, մի բարի մարդ, միթէ մեղք է նրա հետ խօսիլը:

— Այո՛, շատ մեղք է. դա բարի մարդ չէ, այլ սատանայից էլ չար է: Գու՛ գիտես, որ դա լուծէրական քարոզիչ է, դրան ո՛ւր ես քո սեղանի վերայ նստացրել:

— Եթէ լուծերական է, բայց ինքն էլի

հայ է, ուրեմն չի՞ կարելի մեր սեղանի վերայ նստացնել:

— Գլխիս վերայ էլ կը նստացնեմ, եթէ լուռ ու մուռ միւսներին պէս նստէ իւր հացն ուտէ, ուրախութիւն անէ ու դուրս գնայ, բայց որ նստել է, քարոզներ ասում և մարդկանց ճանապարհից հանում, ես նրան ախոռն անգամ մտնելու իրաւունք չեմ տալ: Գեոնրս պատճառով խեղճ Համբարձուծին էլ վիրաւորում ես: Գու՛ կամենում ես բոլոր դրացիներին միանգամով մեզ վերայ խօսացնել տա՛ս:

— Տե՛ս, Մարիամ, լիմարութիւններ ես դուրս տալիս, ինչ շատ հարկաւոր է որ դրացիները մեզ վերայ կը խօսան:

— Ե՛ս եմ լիմարութիւններ դուրս տալիս:

— Ի՛ հարկէ, կէս բարկութեամբ պատասխանեց Գրիգորը, մարդը քեզ մի վատութիւն չէ արել, դու նրա վերայ թշնամաբար ես խօսում, դա լիմարութիւնից էլ մի փոքր աւելի է:

Մարիամը ոչինչ չը պատասխանեց: Այս առաջին կոպիտ խօսքն էր, որ իւր ամուսնուց լսաւ: Նրա աչքերը իսկոյն արտասուքով լցուեցան և նա սկսաւ լալ:

Առաջին արտասուլաց կաթիլները գլորուեցան...



Գ.

Իմ ընթերցողները չը մոռացան ի հարկէ, որ ոսկերիչ Գրիգորը իւր հիւրերից մի քանիսի հետ հետևեալ օրը հրաւիրուած էր Կարօի տունը ընթրիքի: Այդ երեկոյեան, երբ Գրիգորը իւր խանութը փակելով դարձաւ տուն և պատրաստվում էր իւր խոստման համեատ հիւրասիրող բարեկամի մօտ գնալու, Մարիամը եկաւ նրա մօտ և խնդրում էր, որ նա թողնէ այդ մտադրութիւնը:

— Ինչո՞ւ համար, Մարիամ, ինչո՞ւ այդ արգելում ես ինձ, հարցրաւ Գրիգորը ամուսնուց. Կարօի տունը գնալս այս առաջին անգամը չէ, և վերջապէս ես երէկ խոստացել եմ, ի՞նչպէս կարող եմ խոստմանս դրժել:

— Խոստմանդ ուղղակի մի դրժիլ, դու կարող ես ասել թէ հիւանդ եմ, կամ գործ ունէի, վերջապէս ինչ կամենում ես ասն, բայց այսօր մի գնար այնտեղ, աղաչում եմ:

— Բայց ինչո՞ւ համար, զարմանում եմ, ինչից ես կասկածում:

— Ես չը գիտեմ ինչո՞ւ համար, չը գիտեմ թէ ինչից եմ կասկածում, բայց չեմ կամենում, որ այնտեղ գնաս: Այսօր ամբողջ օրը ես տխուր էի և միմիայն այդ բանի վրայ էի մտածում: Ես այնպէս եմ համոզուած, որ

եթէ դու գնաս այնտեղ, եթէ դու մէկ էլ լսես չայն չար սատանայի խօսքերը, դու կը փոխուիս, դու էլ նրա պէս չար կը դառնաս, դու էլ իմ Գրիգորը չես լինիլ...

— Տեսնո՞ւմ ես ինչ յիմար-յիմար մտքեր ես անում, Մարիամ:

— Դարձեալ յիմար... այս խօսքում Մարիամը փղձկեցաւ և նրա աչքերը արտասուքով լցուեցան:

— Հապա ի՞նչ ասեմ, դու ինձ երեսնայ ես կարծում, ի՞նչ է: Այսուհետև պէտք է ինձ փոխեն, այսուհետև՝ պիտի չար դառնամ:

— Չը գիտեմ, Գրիգոր, հոգեակս, միայն խնդրում եմ, մի գնար այնտեղ, իմ սիրտը շատ վատ բաներ է գուշակում, ես վախենում եմ: Այդ Աւետիքի համար մեր դրացիները շատ վատ բաներ են խօսում, ասում են, ով որ մի անգամ նրա ձեռքը յընկաւ՝ էլ ազատուիլ չէ կարող...

— Ե՛հ, դատարկ բաներ ես խօսում, թո՛ղ թէ Աստուածդ կը սիրես, մարդիկը այժմ ինձ են սպասում, ամօթ է: Այս ասելով Գրիգորը անցաւ դէպի դուռը:

— Բայց քեզ խնդրում եմ, ինձ չե՞ս լսում, այս խօսքերով Մարիամը վազեց դէպի ամուսինը և նրա ձեռքը բռնեց:



—Թո՛ղ, ասում եմ, Մարիամ, ինձ մի ուշացնիր, ես խօսք եմ տուել և իմ խօսքից դառնալ չեմ կարող:

—Ո՛հ, չը պէտք է թողնեմ, ես չեմ կամենում որ գնաս:

—Է՛հ, դու ինձ զգուացնում ես: Այս ասելով նա իւր ձեռքը խլեց կնոջ ձեռքից և շտապով հեռացաւ:

Մի քանի րոպէ Մարիամը մնաց իւր տեղը արձանացած. նրա աչքերը անշարժ ուղղուել էին դէպի այն դուռը, որտեղից իւր ամուսինը դուրս գնաց: Բայց մի փոքր յետոյ նա ուշքի եկաւ և դառն հեկեկանքով սկսաւ լալ:

Երեխաները միւս սենեակում խաղում էին. նրանք չը տեսան թէ ի՞նչ պատահեցաւ իրանց մօր հետ: Իսկ Մանիշակը հարևանի տանից դառնալով, երբ իւր մայրը գտաւ լալիս, մնաց շուարած:

—Ի՞նչ պատահեցաւ քեզ, մայրիկ, ինչո՛ւ լալիս ես, հարցրաւ նա մօրը:

Իսկ վերջինս ո՛չ միայն ոչինչ չը պատասխանեց, այլ և աղջկանը տեսնելուն պէս աւելի ևս սկսաւ արցունքներ թափել: Քնքոյշ Մանիշակը չը դիմացաւ մօր արտասուենքներին, և ինքն էլ նրա հետ սկսաւ լալ: Երկար

այս աղիողորմ տեսարանը շարունակվում էր: Ի վերջոյ մայրը սթափուելով դադարեց լալուց և բեկուած սրտով սփոփեց աղջկանը: Սակայն վերջինիս համար դեռ անբացատրելի մնաց իւր մօր լացի պատճառը:

Եւ իրաւ, ինչո՛ւ համար խեղճ կինը այդ աստիճան վշտանում էր, ի՞նչն էր նրա արտասուաց և յուսահատութեան պատճառը:

Այդ իւր ամուսնի լուտերական դառնալու երկիւղն էր, երկիւղ, որ պաշարել էր նրան այն րոպէից սկսած, երբ քարոզիչ Աւետիքը իրանց սեղանի վերայ նստած տեսաւ: «Լուտէրական»,—այս բառը գաւառացի հայ կինը սառնասրտութեամբ լսել չէ կարող, նա ակնյայտնի խորշում է նամանաւանդ այդ անունը կրող հայից: Որքան կամենում էք դատապարտեցէք նրա այդ զգացմունքը, կամենում էք նախապաշարուած կոչեցէք նրան, կամենում էք մոլեւանդ,—այդ նրա հոգը չէ, նա միայն գիտէ, թէ պէտք է խորշել այդ կրօնափոխ մարդիկներից, որովհետեւ դրանց այդ հաւատավաճառութեան գործի մէջ՝ նա ոչինչ ազնիւ և բարի բան չէ նկատում: Մի բան, որ անհերքելի իրողութիւն է մնում հայ կնոջ համար, այդ այն է, որ նա իւր նուրբ դիտողութեամբ պարզ տեսնում է, թէ իւր ընտանեաց



այն անդամը, որ տգիտութեամբ բռնվում է այդ մարմնագգեցիկ ղևերի ցանցի մէջ, նա ընդմիշտ կորչում է իւր ընտանեաց համար: Նա այլ ևս ամենօրուանը չէ, նրա մէջ սառչում են սովորական զգացմունքները, նրա սիրտը այլ ևս համահաւասար չէ տրոփում այդ ընտանեաց սրտի հետ: Հայրական սէր, մայրենի գորով, հարազատաց խանդաղատանք, այդ բոլորը նրա համար կորցնում են իրանց բարերար ազդեցութիւնը: Նա ծաղրում է ամեն բան, նա ծիծաղում է և ընտանեաց բոլոր հնաւանդ սրբութեանց վերայ...

Այսպիսի օրինակները բազմաթիւ էին նամանաւանդ մեզ ծանօթ արհեստաւորաց թաղի մէջ, այդ խաւարի ու տգիտութեան կենդրոնատեղում: Այդտեղ կային լուսէրականացած հայրեր, որոնք խռով էին ապրում իրանց կնոջից ու զաւակներից, երիտասարդներ, որոնք օրն ի բուն անարդում և թշնամանում էին իրանց խորթ հաւատը չք դաւանող ծնողներին: Այս բոլորին Մարիամը ծանօթ էր, նա այս մասին աւելի շատ տխուր պատմութիւններ գիտէր և ահա սրանք էին նրան այնքան վիշտ ու արտասուք պատճառողները: Եւ նրա նախազգացումը իրեն չը խաբէց:

Գրիգորը Կարօի տունը գալով, այնտեղ հաւաքուած գտաւ բոլոր «եղբայրներին» և նրանց, որոնք անցեալ օրը խոստացած էին Աւետիքի «հոգեշահ» քարոզներին յաճախելու: Ընթրիքից առաջ քարոզիչը երկար խօսաց Կարօի հիւրերի հետ: Նա իւր ատենաբանութեան նիւթ էր առել դարձեալ հայոց լուսաւորչական կրօնը և նրանց հոգեւորականութիւնը: Նա այնքան ճարպիկութեամբ յարմարեցնում էր իւր խօսակցութիւնը նամանաւանդ առաջին անգամ ներկայ գտնուող հիւրերի հասկացողութեան և հոգեկան արամազրութեանը, որ նրանցից և ոչ մէկի մէջ չէր յուզում հակառակ զգացմունքներ:

Նորա առաջ նստած էին խեղճ և անզրագէտ արհեստաւորներ, որոնք իրանց սրբազան կրօնը և եկեղեցին ճանաչում էին միայն սյնքան, որքան իրանց ծնողներից սովորել էին: Իե՞ռ հազար հինգ հարիւր տարուց առաջ «եղբայրութիւն և հաւասարութիւն» քարոզող՝ Լուսաւորչական եկեղեցւոյ այդ հարազատ զաւակները, մինչև անգամ զաղափար չունէին թէ՛ մի եկեղեցի կարող է պակասութիւններ ունենալ կամ մէկը կարող է միւսից առաւելութիւններով գերազանցել: Նորանց համար անձանօթ էին Աստուածաբանների Քրիստո-



նէութեան համար արաճ. քմահաճ մեկնաբանութիւնները կամ աւետարանի իւրաքանչիւր բառերի և դարձուածների վերայ մինչև այսօր էլ տեղի ունեցող անվերջանալի վիճաբանութիւնները. և ահա այս պատճառաւ, ինչպէս իրանց աւանդուած էր, նոքա բոլոր եկեղեցիները հաւասար սուրբ և հաւասար ուղղափառ էին համարում: Կարծիք չկայ, որ այս մարդկանց համար, քարոզչի խօսածները հետաքրքիր կլինէին: Մարդիկ բնականաբար միշտ տրամադիր են նորութիւններ լսելու. իսկ քարոզչի խօսածները բոլորն էլ նորութիւններ էին նոցա համար. այդ քարոզները քանդում և ոչնչացնում էին իրանց մինչև այսօր ունեցած համոզմունքները և գաղափարները: Այն եկեղեցին, որին նոքա մինչև այսօր սուրբ և առաքելական էին համարում, յանկարծ քարոզիչը պիղծ է անուանում, Լուսաւորչի այն հաւատը, որին նոքա մինչև այսօր Յիսուս Քրիստոսից և իւր առաքեալներից աւանդուած էին ընդունում, քարոզիչը մոլորեցնող աղանդ է կոչում: Եւ այս ամենը ի հարկ է նա կարողանում էր հաստատել իւր խեղճ և տգէտ ունկնդիրների առաջ, այնպիսի մի տեղ, ուր նորա ստախօսութիւնները հասկացող և երե-

ւան հանող մէկը չկար: Խեղճ արհեստաւորները թէպէտ եկեղեցւոյ և կրօնի մասին քարոզչի խօսածներում սուտը և ճշմարիտը զանազանել չէին կարողանում, բայց իրանց հոգևորականաց պակասութեանց մասին խօսածների մէջ ճշմարտութիւններ տեսնում էին. այդ պակասութիւններից շատերը իրենց յայտնի էին, այդ պակասութեանց վերայ իրանք շատ անգամ մատնացոյց են արել. և ահա հենց այս մէկ հանգամանքը օգնում էր քարոզչին իւր ունկնդիրներին հեշտութեամբ մոլորեցնելու. որովհետև նոքա այսպէս էին մտածում. «Մեր հոգևորականաց պակասութեանց համար խօսածներում մենք ստույթիւն չենք նշմարում. այդ պակասութիւնները կան և մենք տեսնում ենք: Ուրեմն մեր եկեղեցւոյ և կրօնի պակասութեան մասին խօսածներն էլ անպատճառ ճշմարիտ կլինին, որովհետև այդ պակասութիւնները մենք մեր տգիտութեամբ հասկանալ չենք կարող»: Բայց խեղճ մարդիկը չգիտէին, որ այդ անխիղճ մարդորսները հոգևորականաց այդ մեզ անծանօթ պակասութիւնները անդադար առաջ են բերում միմիայն նորա համար, որ մեր եկեղեցին էլ պակասաւոր ցոյց տալ կարողանան: Ապա թէ ոչ նոցա համար ինչ



նշանակութիւնն ունին մեր հոգեւորականաց պակասութիւնները, որոնք ամեն ազգերի հոգեւորականաց մէջ գտնվում են և այն դեռ շատ մեծ չափերով: Ինչ և է քարոզչի ճառախօսութիւնները բոլորը քաղցր ուշադրութեամբ լսում էին, իսկ ոսկերիչ Գրիգորը գրեթէ զմայլուած էր...

Ընթրիքը վերջանալուց յետոյ քարոզիչը դարձեալ խօսաց մի քանի բան. բայց այս անգամ նա կամենում էր ծանօթանալ ներկայ գտնուող նոր հիւրերի կարծեաց հետ: Վերջիններս, որոնք իսկապէս սեպհական կարծիք ասած բանից գուրկ էին, յայտարարեցին, որ բոլորովին համաձայն են քարոզչի յայտնած մտքերի հետ: Իսկ ոսկերիչ Գրիգորը, որ արդէն կատարելապէս իմորուած էր, մինչև անգամ ցանկութիւն յայտնեց նրանց «եղբայրութեան» մէջ մտնելու: Քարոզչի ուրախութեանը չափ չկար: Բայց որպէսզի իւր արժանաւորութիւնը կշռի մէջ սլահէր, նա իսկօրն ջընդունեց ոսկերչի առաջարկութիւնը, այլ խոստում առաւ նրանից, որ նա կանոնաւորապէս կը յաճախէ իւր քարոզութիւններին շարունակ մի ամիս, և այնուհետև կ'արժանանայ այդ կոչմանը:

Ոսկերիչը հաւատարիմ մնաց իւր խոստմանը:

Նա շարունակ այցելում էր «եղբայրների» ժողովարանը և գրեթէ միշտ ներկայ էր գտնվում քարոզչի այն «հոգեշահ» ատենաբանութիւններին, որոնք տեղի էին ունենում երեկոյեանները Կարօի տանը: Մարիամի բոլոր ջանքերը իւր ամուսնուն արդ մարդորս քարոզչի ճանկերից ազատելու համար՝ ապարդիւն անցան: Ո՛չ նրա աղաչանքները, ո՛չ թափած արտասուքները չը կարողացան դարձնել իւր ամուսնուն այն ճանապարհից, որի մէջ դիպուածով սահել էր նրա ոտքը: Կնոջ ամենօրեայ թախանձանքներից ազատուելու համար՝ ոսկերիչը առժամանակ հնարեց ծածկել նրանից իւր այցելութիւնները «եղբայրների» ժողովարանը: Սյս պատճառաւ նա իւրաքանչիւր անգամ տանից ուշանալու համար մի նոթ պատճառ էր հնարում: Մարիամը շատ յօժարութեամբ հաւատում էր իւր ամուսնուն և եթէ գիտենար իսկ թէ նա իրեն խաբոււմ է, դարձեալ աւելի կը կամենար խաբուել, քան իւր ամուսնուց լսել մի վճռական խօսք թէ նա, ընդդէմ իւր ցանկութեան, ընդունում է լատերականութիւն կամ հէնց համակրում է նրան... Սակայն ամիսը լրացաւ թէ չէ, մեր ոսկերիչ Գրիգորը ստացաւ կատարեալ բողոքականի կոչումը. նա դարձաւ «եղբայրների» մի



հաւատարիմ անդամ և մտաւ այն ընկերութեան հովանաւորութեան ներքոյ, որի համար քարոզիչ Աւետիքը պատմում էր թէ՛ երկնքի արքայութեան միակ բանալիքը իւր ձեռքումն ունի...

Մի ամբողջ տարուց յետոյ ոսկերիչ Գրիգորի տունը այլ ևս իւր երջանիկ դրութեան մէջ չէր: Այստեղ ամեն բան այնպէս փոխուել ու տակնուվրայ էր եղել, որ կը կարծէիք թէ մի կործանող ոգի ծանրացել է այդ տան վերայ: Կարծեաց և համոզմանց տարբերութիւնը, որ պառակտում է ամեն միութիւն, իւր աւերիչ ներգործութիւնը արել էր և այս ընտանեաց վերայ: Տանուտէրը կորուսել էր իւր առաջին զուարթ բնաւորութիւնը: Նա դառնում էր տուն տխուր և մելամաղձիկ դէմքով. մի քանի ընդհատ հազիւ մնում էր իւր յարկի տակ և դարձեալ դուրս էր գնում այցելելու «եղբայրների» ժողովարանը: Մարիամը անդադար թտածելուց և իւր կորուստը լալուց նիհարել էր, նրա վառվռուն այտերը դալկացել էին և գեղեցիկ աչքերը կկոցուել կնճիռներով: Ծնողաց հոգեկան տանջանքները ոչ սակաւ ներգործել էին և երեխաների զուարթութեան վերայ: Շատ հազիւ էր պատահում, որ նրանք զբաղուէին իրանց մանկական խաղերով մօր

տխուր աչքերի առաջ, չը նայելով որ վերջինս բնաւ այդ չէր արգելում նրանց: Բայց բոլորի մէջ ամենից աւելի տանջվում էր Սանիշակը: Նա գրեթէ ամեն երեկոյ ներկայ էր լինում ծնողաց տխուր վիճաբանութիւններին, որոնք շատ անգամ վերջանում էին կռուով: Այսպիսի երեկոները միշտ իւր մայրը լալիս էր և ինքը ընկերակցում էր նրան իւր լռիկ արտասունքներով: Յերեկները նա մինչև անգամ չէր գնում հարևանի աղջկերանց հետ խօսելու կամ ժամանակ անցուցանելու, ինչպէս առաջ սովորութիւն ունէր:

Այն օրից սկսած, երբ իւր դրացի աղջկանց մէջ իւր ընկերակիցներից մէկը նրան վիրաւորելու համար անուանեց նրան «լութէրականի աղջիկ», նա այլ ևս ոչ մի ընկերութեան հետ չէր համարձակվում տեսնուիլ: Իւր ծաղկող հասակը, որ աւելացնում էր նրա գեղեցկութիւնը, չէր կարողանում հալածել այն անոյշ տխրութիւնը, որը զգայուն աղջկայ ճակատին դրոշմել էին ընտանեկան խռովութիւնները: Նա ամբողջ օրը զբաղուած էր ան հոգսերով, և երբեմն միայն խօսակցում էր Աշոտի հետ, երբ նա խանութից դառնում էր տուն յայտնելու համար, որ այն երեկոյ իւր վարպետը հրաւիրուած է «եղբայրներից»



մէկի տունը: Այս երիտասարդն էր միայն մնացել բոլոր բարեկամներից, որին մայր և աղջիկ կարողանում էին բանալ իրանց սրտերը և յայտնել իրանց՝ դեռ շատերին անծանօթ վշտերը...

Ահա, այս պատկերն էր ներկայացնում ոսկերչի ընտանիքը նրա բողոքականութիւն ընդունելուց մի տարի յետոյ: Սակայն այստեղ էլ դեռ լրացած չէր այդ ընտանեաց թշուառութեան սահմանը. ճակատագիրը աւելի տխուր ապագայ էր պատրաստել նրա համար:

### Գ.

Մի կիւրակէ առաւօտ քարոզիչ Աւետիքը եկաւ ոսկերչի տունը և յայտնեց նրան, որ իրանց գլխաւոր պաստօրը Տփխիսից եկել է, ուստի ինքն էլ բոլոր միւս «եղբայրների» հետ պիտի պատրաստուի նրա տեսութեան գնալու: Ոսկերիչ Գրիգորը նախ երկիւղ յայտնեց իւր տգիտութեամբ մեծապատիւ պաստօրի առաջ երևալու. բայց երբ Աւետիքը հարեանցի կերպով ծանօթացրաւ նրան պաստօրի անձնաւորութեան հետ, յայտնելով որ նա ինքը իսկ այս քաղաքացի է և յայտնի դպիր Ղազարի տղան է, որին իւր հայրը մանկութեան ժամանակ մի քանի ոսկով ծախել էր նէմէնցներին, որոնց մօտ նա մնալով

ուսել էր «Տիրոջ խօսքը» և ստացել այս մեծ պաշտօնը, և թէ նա բոլոր «եղբայրների» հետ իրանց հասկացած լեզուով պիտի խօսի, այն ժամանակ ոսկերիչը սիրտ առաւ և հազնելով իւր պահետի հագուստները, ընկերացաւ քարոզչին: Վերջինս նրան առաջնորդեց իւր տունը, ուր հաւաքուած էին բոլոր «եղբայրները»: Իսկ այստեղից նրանք բոլորը միասին գնացին և ներկայացան մեծապատիւ պաստօրին:

Քարոզիչ Աւետիքը պաստօրին ծանօթացրաւ «եղբայրներից» իւրաքանչիւրի հետ, համառօտ ծանօթութիւններ տալով նրանց անցեալի և ներկայի վերայ, և յետոյ ներկայացրաւ իւր եռամեայ գործունէութեան հաշիւը: Այս հաշուից պաստօրը բաւականութեամբ տեսաւ, որ քարոզիչ Աւետիքը այդ ոչ շատ երկար միջոցում կարողացել էր երեսուն և երկու հոգի լուսաւորչական հայերից դարձնել աւետարանականութեան: Միայն շատ չ'ախորժեց տեսնելով որ ներկայացրած տուժարի մէջ քսան-լեւօթն հոգի պարտական էին կեդրոնական սնդուկին բաւական նշանաւոր գումարներ: Օրինակ՝ բազազ Յարութիւնը 1200 ռ., նրա աներձագ Յովակիմը 1400 ռ., մուշտակագործ Ալէքսանը 1000 ռ., ոսկերիչ Կարապետը (մեր ծանօթ Կարօն) 1500 ռ., ոսկերիչ Սիմօնը 900



ուուբլի: Սրանք բոլորը ստացել էին կանխիկ դրամ իրանց անհրաժեշտ պիտուից համար:

Այնուհետև գալիս էին երկրորդական ճանապարհներով պարտապանները:

— Հիւսն Մաթէոսի տունը հրապարակական աճուրդից ազատելու և նրա պարտատէրերը գոհացնելու համար ծախսուած էր 1100 ուուբլ:

— Նրա արհեստակից Սարգսին ձիու գողութեան մէջ բռնուած լինելուն պատճառաւ 18 ամսական բանտարկութիւնից ազատելու և ձիատէրը գոհացնելու համար 160 ուուբլ:

— Նախկին աւետարանական փականագործ Յովհաննէսին իւր կինը և որդիկները իւր ուղղափառ դաւանութեան դարձնելուն համար ընծայ 300 ու., այլ և նրա կնոջը և երկու որդոց մի-մի ձեռք հազուստ, արժէքը 120 ուուբլ:

— Գրազիր Դանիէլի համար սեղանապետի պաշտօն ձեռք բերելու առթիւ երկու անձանց բարեխօսութիւնը վաստակելու համար նուէր 250 ոուբլ. այլ և նոր տարուայ օրը նոյն անձինքների համար ընծայ երկու գլուխ շաքար և երկու ֆունտ թէյ—14 ու. 40 կօպէկ:

— Փողահար Ասրիբէկի չհաս պսակը յաջողցնելու համար նուէր 300 ու.: Եւ յետոյ այդ

երկուսին աւետարանականութիւն ընդունելու համար նուէր մի միայրկ տուն, արժողութեամբ 490 ոուբլ:

Սրանից յետոյ նշանակուած էին մանր պարտապանների անունները կամ փոքր գումարով տուած նուէրները: Սրանք այնքան աննշան էին, որ նրանց համար երկար թլուամն մասանց անել աւելորդ է. կը յիշենք միայն մի քանիսը: Օրինակ. Ծառաձագ գիւղացի Կարապետին նուիրուած էր 26 ոուբլու արժողութեամբ մի էջ, խառատ Յովսէփին 90 ոուբլու արժողութեամբ հիւսնի գործիքներ, Բալլու գիւղացի Մկրտչին փոխտուած էր 60 ոուբլ, երկու ջրաղացի քարեր գնելու համար. այսպէս իմացիք և մնացածները:

Ներկայ եղող երեսուն և երկու հոգուց միայն հինգ հոգի կային, որոնք «եղբայրութիւն» էին ընդունել առանց որևէ նիւթական նպաստ ընդունելու: Դրանցից մինը ոսկերիչ Գրիգորն էր:

Պարոն պաստօրը այս վերջիններին առաւել մեծարանքով ընդունեց և ամեն տեսակ յարգանաց և գովեստի արժանի յայտարարեց նրանց:

Յետոյ նա սկսաւ խօսել մի բաւական ընդարձակ ճառ, որի մէջ գլխաւորապէս ձգտում



էր հասկացնել «եղբայրներին», թէ նրանք ի՞նչ մեծ և աստուածահաճոյ գործի են նուիրել իրենց, աւետարանականութիւն ընդունելով, և թէ սրբան նեղութիւններ և վշտեր պէտք է կրեն իրանց այդ ընտրած ճանապարհով անյողոյսող առաջ գնալու համար, թէ սրբան դժուարութեանց պիտի հանդիպին և թէ սրբապի բարոյական ոյժ պիտի գործ դնեն այդ դժուարութեանց յաղթելու համար:

Գուր, ասում էր պատօրը, բաղդաւոր էք նրանով, որ առաջինն էք այդ լուսաւոր ճանապարհի վերայ ոտք դնողները: Գուր կանչուած էք նրա դժուարութիւնները հարթելու և մաքրելու ձեր ապագայ սերունդի համար: Այս իսկ պատճառաւ էլ դուք առաւելապէս պիտի վարձատրուիք երկրում առաջին նահատակների փառաւոր անունը և երկնքում «Տիրոջ» արքայութիւնը ժառանգելով: Բայց որովհետեւ ձեզանից մի քանիսը, ինչպէս մեր քարոզիչ եղբայրը ինձ յայտնեց, դեռ ձեր ընտանիքը ձեր ընտրած լուսաւոր ճանապարհի վերայ հանելու չէք յաջողած, այդ պատճառաւ ձեր գոհաբերութիւնը կատարեալ չէ: Գուր կամ չը պիտի ապրիք այն ընտանիքում, որ հեթանոս է, կամ եթէ ապրում էք այդ հեթանոսներին էլ պիտի աշխատէք ա-

ռաջնորդել դէպի փրկութեան ճանապարհը: Ես գիտեմ, այդ բանի համար դուք առաջին անգամ, ինչպէս ասացի, կը հանդիպէք դժուարութիւնների, դուք կը բազմացնէք ձեր թշնամիները, կը զրգուէք ձեր դէմ ձեր բարեկամների ատելութիւնը, ազգականների արհամարհանքը, դուք կը յարուցանէք ձեր ընտանեաց մէջ խռովութիւն, անհամաձայնութիւն և շատ անգամ կռիւ: Բայց այս բոլորը ձեզ չը պէտք է վհատեցնեն: Գուր չը պէտք է կորցնէք ձեր արիութիւնը, այլ միմիայն անձանձիր աշխատէք: Մի օր դուք ուրախութեամբ կը տեսնէք, որ վերջապէս հասաք ձեր սուրբ և վսեմ նպատակին: Մի օր դուք հպարտութեամբ կը տեսնէք, որ ձեզանից իւրաքանչիւրը մի-մի ընտանիք և այնուհետեւ մի ամբողջ սերունդ հեթանոսութիւնից դարձնելու պատճառ եղաք, և այն ժամանակ ձեր հոգիները համարձակ կը դիմեն դէպի 'նրան' որ կանչում է. «Եկէք իմ հօր օրհնուածներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը»:

Այս և սրա նման շատ բաներ երկար խօսում էր պարոն պատօրը, և երբ իւր ճառը վերջացրաւ, նա հարցրաւ ներկայ եղողներէ կարծիքը իւր ճառի մի քանի կէտերի վե-



րաբերմամբ: Բոլորը, ի հարկէ, պաստօրի յայտնած մտքերի հետ համաձայն էին: Միայն ոսկերիչ Գրիգորը թոյլտուութիւն խնդրեց իմանալու թէ՛ «արդեօք, իբրև բացառութիւն, իրեն չի՞ ներուել, որ ինքը իւր համար աւետարանական մնայ, իսկ իւր կնոջը և երեխաներին թոյլ տայ իրանց մինչև այժմ դաւանած կրօնը պաշտելու»:

— Մենք հեզութեան աշակերտներ ենք, համոզիչ եղանակով պատասխանեց պաստօրը, և ոչոքի չենք կարող ստիպել, որ նա զօռով մեր աշակերտը լինի: Բայց ովոր մի անգամ մեր «եղբայրութեան» մէջ է մտնում, նա պէտք է մարդասէր լինի, և չը կամենայ, որ մարդկանց հոգիները կորչին: Իուք էլ, որ մեր սիրելի «եղբայրներից» էք, նոյն հոգևով պէտք է վառուիք, այսինքն՝ պէտք է աշխատէք, որքան կարող էք, մոլորեալ հոգիները փրկելու, և ոչ թէ թոյլ տաք, որ նրանք կորչին և գեհենի բաժին դառնան: Այս ամենը գիտենալուց լետ, ձեր կամքից է կախուած — թողնել ձեր ընտանիքը մոլորութեան մէջ կամ դարձնել նրանց ուղիղ ճանապարհ: Բայց և այնպէս, աւելացրաւ պաստօրը, դուք որ առանց շահախնդրութեան մտել էք մեր «եղբայրութեան» մէջ (որովհետև պաստօրը փոր-

ձով գիտէր, որ այդտեսակ հաւատափոխները հազուադիւր էին), դուք չը պէտք է արատաւորէք ձեր անբիծ անուներ, թոյլ գտնուելով այն մեծ գործի մէջ, որի համար կանչուած էք «Տիրոջ» կամքով: Եթէ դուք թշնամի չէք այդ ընտանիքին, ուրեմն գործով պէտք է ցոյց տաք ձեր բարեկամութիւնը, փրկելով նրանց բոլորի հոգիները անդառնալի կորուստից:

Պաստօրի խօսքերը խորը ներգործեցին ոսկերչի վերայ և նա բոլորի վկայութեամբ խօստացաւ «չ'արատաւորել իւր անբիծ անուներ»: Սրանից լետ պաստօրը հրաւիրեց «եղբայրներին» Աստծուն աղօթելու: Այս ընտանեկան հանդէսն էլ վերջացնելուց լետ իւրաքանչիւրը քաշուեցաւ իւր տունը:

Ճանասլարհին քարոզիչ Աւետիքը, Կարօն և Գրիգորը միասին էին գալիս, որովհետև նրանց ճանապարհը մէկ էր:

— Գրիգոր եղբայր, խօսեց Աւետիքը, դու լաւ ըմբռնեցիր պաստօրի միտքը:

— Այո՛, որքան կարողացայ, պատասխանեց Գրիգորը, նա ասում էր, որ ես պէտք է աշխատեմ իմ ընտանիքն էլ մեր հաւատին դարձնելու:

— Ապրիս, ճիշդ այդպէս է: Այժմ ի՞նչ ես կարծում, պիտի կարողանաս թէ ոչ:



— Մեծ դժուարութիւն եմ տեսնում այս ձեռնարկութեանս մէջ, հետեւապէս սկզբից ոչինչ հաստատ բան չեմ կարող խոստանալ:

— Ի՞նչ դժուարութիւն պէտք է լինի, եղբայր, մէջ մտաւ Կարօն, քս կինը իմ կնոջից աւելի պինդ հայ չէր լինի. բայց ես նրան մոմի պէս կակղացրի: Այստեղ հարկաւոր է առնական հաստատամտութիւն: Եթէ ունիս՝ ուրեմն կամքդ կատարուած է:

— Սխալվում ես, ոչթէ իւր, այլ «Տիրոջ» կամքը, նկատեց քարոզիչը: Իսկ եղբայր Գրիգորը այդ առնական հաստատամտութիւնը ունի. ես գիտեմ, երբ նա մտադրուեցաւ մի բան անելու, արգելքները նրա համար նշանակութիւն չ'ունին:

— Ես միայն իմ ունեցած ոյժս գործ կը դնեմ, թէ ի՞նչպէս կը թաշտղի, Աստուած գիտէ:

— Այո՛, ոյժ պէտք է գործ դնել, աւելացրաւ Կարօն, կինը միայն ոյժի առաջ է յաղթում: Ես մի քսան անգամ ծեծել եմ կնոջս մինչև նրան ճանապարհ եմ բերել:

— Ո՛չ, առաջ քաղցրութեամբ և սիրով... նկատեց քարոզիչը և լռեց, թողնելով որ խօսքի մնացորդ բառերը, «իսկ յետոյ ոյժով և փայտով» իրենք իրենց հասկացուին, որովհետև

քարոզիչը զգուշանում էր իւր «սէր և խաղաղութիւն» քարոզող մտքերին դաւաճանող բառեր արտասանել: Իսկ ձեր այդ գործը, մի փոքր լռութիւնից յետ շարունակեց նա, մեծ պարծանք կարող է բերել մեր «եղբայրներին» և գլխաւորապէս մեր պաստօրին, որը իւր բոլոր ճիգը գործ է դնում մեր պատիւը և անունը բարձր պահելու բոլոր Եւրօպայի և Ռմերիկայի միսիօներակաւն և աւետարանական ընկերութիւնների առաջ: Վերջին բառերը առանձին հեշտօհարութեամբ էր արտասանում քարոզիչը, ոչ թէ նրա համար, որ նրանք մի որևէ նշանակութիւն ունէին, այլ որպէսզի Գրիգորի վերայ՝ նրան անձանօթ այդ բառերով՝ աւելի մեծ ներդրութիւն անէր:

— Կ'աշխատեմ, անվստահ ձայնով պատասխանեց Գրիգորը քարոզչին և նրա ձեռքը սեղմելով ւզղուեցաւ դէպի իւր տան ճանապարհը:

— Իսկ մենք կը յուսանք, վստահ ձայնով նրա ետևից աւելացրաւ քարոզիչը և հեռացաւ Կարօի հետ:

Ե.

Ճաշի ժամանակ էր, երբ Գրիգորը տուն հասաւ. նա ճանապարհին արդէն մտածել էր



Թէ ի՞նչ պիտի խօսէր իւր կնոջ հետ: Ներս մտնելու ժամանակ երեխաներից երկու փոքրիկները, որոնք սենեակում խաղում էին, հայրենին տեսնելով դադարեցրին իրանց խաղը և կամենում էին դուրս գնալ: Գրիգորի սառն յարաբերութիւնները իւր կնոջ հետ երեխաներին էլ սառեցրել էին իրանից, ուստի երբ ինքը տուն էր մտնում, նրանք հեռանում էին հօր ներկայութիւնից իրենց ազատելու համար: Բայց այս անգամ հայրը նրանց թող չը տուաւ դուրս գնալու: Նա ծիծաղերես բռնեց նրանց ձեռքերից և իւր մօտ նստացնելով սկսաւ նախկին քնքշութեամբ ողջագուրել նրանց: Երեխաները զարմացած աչքերով նայում էին մերթ հօրը և մերթ միմեանց երեսին, և կարծես այդ անմուռն հայեացքներով կամենում էին հարցնել թէ՛ «արդեօք այս մարդը իրանց հայրը չէր»:

Այս միջոցին ներս մտաւ և Մարիամը: Սա էլ ոչ սակաւ զարմացաւ իւր ամուսնու այս անսովոր փոփոխութեան վերայ: Մի ամբողջ տարի էր՝ որ ժպիտը նրա երեսից անհետացել էր, որ նա չէր գգուել իւր երեխաներին և որ իւր կնոջը կողմնակի ճանապարհներով պատժելու համար, անտարբեր և սառն էր մնում գէպի այն բոլորը, որոնք մի համեստ

ընտանեաց միակ երջանկութիւնն են կազմում: Մարիամը մի քանի ըոպէ կանգ առաւ դրան մէջ և չէր վստահանում առաջ գնալ: Մի տեսակ անհանգստացնող ուրախութիւն, որից դեռ չէր բաժանվում խաբուած լինելու երկիւղը, բռնել էր նրան: Նրա սիրտը անընդհատ տրոփում էր...

Վերջապէս Գրիգորը նրան տեսաւ:

— Այդ դ՞ուր ես, Մարիամ, դարձաւ դէպի նրան քաղցրութեամբ, ինչ՞ուր գընումն ես կանգնել, մօտ արի, քեզ հետ խօսելիք ունիմ:

Մարիամը մօտեցաւ, բայց նրա իւրաքանչիւր քայլը մեքենայական էր: Նա հասնելով ամուսնու մօտ նստեց աթոռի վրայ:

— Փոքրիկներս, դուք զնացէք միւս սենեակում խաղալու, դարձաւ Գրիգորը երեխաներին, ճաշի ժամանակ մենք ձեզ կը կանչենք: Երեխաները հնազանդվեցան և դուրս գնացին:

Մի փոքր ժամանակ լուռութիւն տիրեց:

— Ինչ՞ուր տխուր ես, Մարիամ, առաջին անգամ լուռութիւնը ընդհատեց Գրիգորը:

— Ի՞նչ ունիմ ուրախանալու, տխրութեամբ պատասխանեց Մարիամը:

— Իրաւունք ունիս, Մարիամ, շարունակեց ամուսինը, բայց յիշում ես դու այն օրերը, որը մի տարի առաջ մենք անցուցանում էինք:



— Այն, այն երջանիկ օրերը ես չեմ մոռանում, պատասխանեց Մարիամը խորը հառաչելով, այն օրերը, որոնց ես կորցրել եմ և որոնց ես միշտ արտասուօք եմ մտաբերում: Վերջին խօսքերի հետ արտասուաց երկու խոշոր կաթիլներ գլորուեցան նրա թորշմած այտերի վերայ:

— Այժմ, Մարիամ, ես կամենում եմ այդ օրերը կրկին դարձնել քեզ. ես էլ փափագում եմ իմ տան խաղաղութիւնը:

— Ա՛խ ո՛ւր էր թէ փափագէիր այդ խաղաղութիւնը, ո՛ւր է, դարձրո՛ւ ինձ իմ ամուսինը— իմ Գրիգորը... Ա՛խ, եթէ կարողանայիր ըմբռնել թէ ո՞րքան տանջուել եմ ես, որքան արտասուել... Որք՝ իմ մանուկ հասակից, միշտ գուրկ՝ ծնող ունեցող որդիների ուրախութիւնից, այս յարկի տակ մտնելուց լետույ, միայն քո մէջ եմ գտել իմ առաջին ուրախութիւնը, իմ երջանկութիւնը, իմ կեանքը, և նրանից բաժանուելն մահ էր ինձ համար, իսկ դու բաժանեցիր ինձ իմ ուրախութիւններից... Այս խօսքերի հետ Մարիամը սկսաւ դառնապէս արտասուել:

— Բայց գիտնո՞ւ, սիրելի Մարիամ, մեր տան խաղաղութիւնը, մեր անցեալ երջանիկ օրերը միմիայն ինձնով չը պիտի վերադառնան, դու

էլ պէտք է օգնես ինձ, մենք երկուսս համակամ և համամիտ պիտի գործենք:

— Ինչ որ ինձ է վերաբերում, ես պատրաստ եմ ամեն բանի համար, միայն դու եղիր առաջուանը, Գրիգոր, միայն դու երեկոյեանները ժպիտը երեսիդ մտիր տուն, և այդ երեկոյները, մեր տեսութեան միակ ժամերը, քո ընտանեաց մէջ անցրո՛ւ, զգու՛իր քո զաւակներին առաջվան պէս, ուրախացիր նրանցով, ուրախացրո՛ւ նրանց և այդ բոլորի հետ միասին մտիթարի քո ամուսնուն: Մի ամբողջ տարի է, սկսուած այն դժբաղդ օրից, երբ այն անկույզ հիւրին մեր տան մէջ ընդունեցիր (նա խօսում էր քարոզիչ Աւետիքի մասին), մենք այլ ևս միմեանց չենք ճանաչում: Դու սառն և անտարբեր ես դէպի քո կինը և զաւակները և մենք բոլորս դէպի քեզ: Տեսնում ես, բոլորիս դէմքն էլ վշտահար, բոլորիս սիրտն էլ կոտրուած, մեր ամբողջ տունը քայքայման մէջ, բայց ինչո՞ւ համար այս ամենը և մինչև երբ այսպէս...

Գրիգորը տեսնում էր, որ չէր կարողանում անտարբերութեամբ լսել կնոջ խօսքերը: Նրա դողացող և սրտաշարժ ձայնը թափանցում էր իւր սրտի խորքերը, նրա աղաչաւոր և արտասուալից աչքերը կարծես շանձեր էին



Թափում իւր երեսին, նա իրեն գգում էր յաղթահարելու մօտ... Բայց այս հանգամանքը նպատակարար չէր իւր նպատակին, ուստի կնոջ յուզմունքը և անյաջող սկսուած խօսակցութիւնը առ ժամն դադարացնելու համար, ասաց.

— Մարիամ, անցեալը յիշելուց և նրա վերայ խօսելուց դադարենք: Մենք պէտք է հաշտ լինինք, այս վճռուած է. բայց թէ ի՞նչ պայմաններով, այդ մասին գեռ պէտք է խօսեմ քեզ հետ: Այժմ գնահատու ճաշ բեր մեզ համար, եթէ պատրաստ է, ես սաստիկ քաղցած եմ, իսկ նրանից լետ մենք շատ կարող ենք խօսել:

— Շատ լաւ, ասաց Մարիամը, և ուրախութեամբ դուրս գնաց սենեակից:

Մարանի դրան մօտ նա պատահեց Մանիշակին: Նա զարմացաւ իւր մօրը մի անսովոր ուրախութեան մէջ տեսնելով:

— Ի՞նչ է պատահել քեզ, մայրիկ, անհանգստութեամբ հարցրաւ նա:

— Վերջապէս Աստուած խղճում է մեզ, գաւազնի, ասաց նա գրկելով գեղեցիկ աղջկանը, նա քո հօր սիրտը և գուժը շարժեց, վերջապէս նա մեզ հետ հաշտվում է:

— Ատուած, որքան ուրախ եմ. մայրիկս,

ուրեմն այսուհետեւ մեր տանը կռիւներ չեն լինիլ, այնպէս չէ:

— Ի հարկէ, դատրիկս:

— Ահ, չը գիտես, մայրիկս, թէ որքան քեզնից ծածուկ լաց էի լինում իւրաքանչիւր անգամ, երբ հայրս քեզ հետ կռվում էր:

— Խեղճ աղջիկ, է հարկէ լաց կը լինէիր:

— Մայրիկ, ուրեմն հայրս այլ ևս լուտերական չէ, այնպէս չէ:

«Լուտերական» բառը լսելուց մայրը մի րոպէական սարսուռ զգաց ամբողջ մարմնի մէջ. նա չը կարողացաւ իւր դատեր հարցին ուղղակի պատասխանել: «Լաւ, այդ մասին լետոյ, ասաց նրան, աշխատելով հեռանալ նորանից, առայժմ դու գնահատանը պատրաստիր, իսկ ես իջնում եմ խոհանոցը, հայրդ քաղցած է, պէտք է ճաշ տալ նրան»: Այս ասելով նա սանդուղքից ցած իջաւ, իսկ Մանիշակը գնաց սեղանը պատրաստելու:

Բայց այնտեղ Գրիգորին տանջում էին ուրիշ մտածմունքներ: Նա չը գիտէր թէ ի՞նչ հնարներով պէտք է կարողանար համոզել իւր կնոջը՝ իւր նոր հաւատը ընդունելու: Նրա աչքի առաջից դեռ չէին հեռացել Մարիամի վշտահար դէմքը, նրա արտասուող աչքերը. նա դեռ լսում էր նրա աղաչաւոր ձայնը...



«Բայց ինչո՞ւ համար այս ամենը, զարմացմամբ ինքն իրեն հարցնում էր նա. ինչո՞ւ կորցնել իմ կնոջը, իմ երեխաներին, իմ տան խաղաղութիւնը... Այս բոլորը, որքան և ուրիշների համար փոքր բաներ լինէին, այսուամենայնիւ նրանք կազմում էին իմ կատարեալ երջանկութիւնը: Բայց մի՞թէ այսուհետեւ չեմ կարող դառնալ իմ առաջի գրութեանը, մի՞թէ չեմ կարող բոլորը մոռանալ և ճանաչել միմիայն իմ ընտանիքը...» Այս խորհրդածութիւններից յետ նա լռեց և նորէն ընկաւ մտախոհութեան մէջ: Հազար և մի տեսակ մտածմունքներ պաշարել էին նրան. նա տարուբերվում էր, երբեմն թեքուելով ի նպաստ իւր կնոջ և մերթ հակառակ: Նրա հոգին այնպէս խռովուել և միտքը այնպէս շփոթուել էր, որ երկար ժամանակ չէր վստահանում մի վճռական քայլ անելու: Երկար այս տարտամ գրութեան մէջ մնալուց յետոյ, վերջապէս նա մտաբերեց պաստօրին արած իւր հանդիսաւոր խոստումը, քարոզչի ճանապարհին իւր հետ խօսածները, և բարձրանալով աթոռից՝ բացականչեց. — «Ո՛չ, այս կատարեալ խայտառակութիւն կը լինի, ես հրապարակապէս խոստացայ այն մարդուն «չարատաւորել իմ անբիծ անունը,» և ես կը

կատարեմ իմ խոստումը: Այլապէս ինձ անհնար կը լինի հրապարակելնել այն բազմաթիւ մարդկերանց հետ, որոնք այնտեղ վկայ էին իմ խոստման: Այստեղ կորչում է իմ առտնին երջանկութիւնը, իսկ այնտեղ իմ անունը. վերջինը առաւել արժանի է պաշտպանութեան»:

Այս հասարակ արհեստաւորի մէջ այնքան բուռն էր պատուասիրութեան զգացմունքը, որ նա իւր անփոխարինելի երջանկութիւնը գիտակցաբար զոհում էր նրան, որովհետեւ արել էր մի խոստում և պիտի անպատճառ կատարէր նրան; այլապէս նա իրեն կենդանի մեռեալ էր համարում: Խեղճ մարդ, բայց դու չը գիտէիր, որ նոյն իսկ այդ քեզ որսացող և քեզնից խոստում առնող քարոզիչները հարիւր անգամ աւելի ստոր էին քեզնից այն զգացմանց մէջ, որոնց դու պաշտում էիր քո սոգիտութեամբ հանդերձ: Եւ թշուառութիւնն այն է, որ այդ ուռկանաւորների ձեռքում դու պատուասիրութեան զոհերի վերջինը չէիր լինելու:

Երիգորը իւր տարաբաղդ վճիռը տուել էր արդէն, երբ Մանիշակը ներս մտաւ և ճաշի հրաւիրեց նրան: Նա առանց այլևայլութեան հետեւեց իւր դստերը, մտադրուած լինելով և



ոչ մի դէպքում չը յաղթահարուիլ իւր կնոջից:

Այսօր սեղանը բոլորել էին ընտանեաց բոլոր անդամները: Մարիամը գտնվում էր կատարեալ ուրախութեան մէջ: Նա մի համեմատութիւն էր անում այս և իւր անցեալ օրերի մէջ, և հրճվում էր տեսնելով նրանցում շատ մօտ նմանութիւն: Նրա գործը և խանդադատանքը ըսպէ առ ըսպէ աճում էին թէ իւր ամուսնու և թէ որդիերանց վերայ: Նա այժմ զգում էր, որ մայր և ամուսին էր: Սեղանի վերայ, ամբողջ ճաշի ժամանակ, նա ուրախութիւնից զրեթէ ոչինչ չը կերաւ, այլ կերակուրները հրամեցնում էր կամ ամուսնուն կամ երեխաներին:

Գրիգորը նույնպէս իւր կողմից իրեն ուրախ էր ձևացնում: Նա երբեմն-երբեմն կատակներ էր անում և ծիծաղում երեխաների հետ, թէպէտ բռնի, իսկ երեխաները անընդհատ շաղակրատում էին: Մի խաբուսիկ և վայրկենական ուրախութիւն բոլոր գերդաստանի վերայ կենդանութիւն էր բերել...

Երբ ճաշը վերջացաւ, երեխաները զուրս գնացին խաղալու, իսկ Մանիշակը զբաղուած էր սեղանը հաւաքելով: Այդ ժամանակ Գրիգորը Մարիամի հետ առանձնացաւ իր սենեակը:

Մի քանի կցկտուր խօսքերից լետ Գրիգորը դարձաւ կնոջը հետեւեալ խօսքերով.— «Այսպէս սիրով և խաղաղ ապրիլ լաւ է, այնպէս չէ, Մարիամ»:

— Եւ դեռ հարցնում ես, պատասխանեց Մարիամը: Ի՞նչ էր երէկ մեր տան դրուժիւնը և ի՞նչ է այսօր: Ել ի՞նչ հարկ կայ ասելու, որ պէտք է ամեն բան զոհենք միմիայն մեր տան այս խաղաղ դրութիւնը պահպանել կարողանալու համար:

— Շատ գեղեցիկ, մի երկու ժամ առաջ միևնույն բանն էիր ասում, և ես աւելացնում էի, որ մեր դրութեան բարուրումը որքան ինձանից, նույնչափ և քեզանից է կախուած: Եւ դու խոստացար ամեն բան անել, ինչոր քեզ է վերաբերում:

— Այո, այժմ էլ խոստանում եմ:

— Լաւ ուրեմն, լսիր, գիտե՞ս որ մենք միմիայն մեր մարմնոյ համար չենք ապրում, այլ մեր ստեղծող «Տիրոջ» կամքն է և մեր էլ գլխաւոր ցանկութիւնը պէտք է լինի, որ մեր հոգու փրկութեան համար էլ ապրինք:

— Գիտեմ:

— Գիտե՞ս որ մենք այս աշխարհը եկել ենք ոչթէ մեծ վայելչութիւններ քաշելու, այլ որքան ժամանակ ունինք՝ աշխատելու մեր հոգ-



ւոյ փրկութեան և յաւիտենական կեանքին արժանանալու համար:

— Գիտեմ:

— Գիտես որ մեր հոգու փրկութիւնը ձեռք բերելու և յաւիտենական կեանքին արժանանալու համար էլ մենք պէտք է այս աշխարհում տանենք ամեն տեսակ նեղութեան, զրկողութեան և չարչարանաց, պէտք է շատ անգամ մոռանանք մեր ազգականներին, մեր սիրելիներին և մինչև անգամ մեր անձը: Որովհետև Տէրն ասում է. «Ով որ չի թողնիլ իւր հօրը, մօրը, կնոջը և որդիքներին, և իւր խաչը չի վերցնիլ և գալ իմ ետևից, նա ինձ արժանի չէ»:

— Գիտեմ, և այդ խօսքերը ես շատ անգամ լսել եմ եկեղեցում:

— Գիտես նոյնպէս, որ այդ հոգու փրկութիւն ձեռք բերելը կամ յաւիտենական կեանքին արժանանալը ճշմարիտ հաւատով պէտք է լինի:

— Ի հարկէ, հապա թուրքի հաւատով չէ՞ լինելու:

— Այդպէս է, թուրքի հաւատով չէ լինելու, բայց այն հաւատովն էլ չէ լինելու, որը մի տարի առաջ ես ունէի և որը մինչև այսօր էլ դու ունիս:

Մարիամի դէմքը մռայլեցաւ, մի տիրեցու-

ցիչ կասկած պատեց նրա սիրտը, որը անհանգստութեամբ սկսել էր արդէն տրոփել: Նա անվստահ ձայնով դարձաւ ամուսնուն. — «Նըճմարիտն ասած ես այստեղ քեզ չեմ հասկանում»:

— Ուրեմն լաւ չը լսեցիր: Ես քեզ ասում եմ, այն հաւատը ինչոր ես ունէի առաջ և որը այժմ դու ունիս՝ նա քո հոգին փրկել և քեզ յաւիտենական կեանքին արժանացնել չէ կարող, նա ընդհակառակը այդ հոգին կը կորցնէ և դժոխքի կրակին կը մատնէ:

— Բայց ինչո՞ւ համար:

— Որովհետև այդ հաւատը սովորեցնում է քեզ անել այն, ինչոր «Տիրոջ» կամքը չէ, և ընդհակառակը արգելում է անել այն, ինչոր «Տիրոջ» կամքն ու պատուէրն է: Այդ պատճառով դու պէտք է աշխատես հեռանալ այդ սխալեցնող հաւատից և դառնալ դէպի նրան, որը ուղիղ և ճշմարիտ է:

— Բայց մի՞թէ այսքան տարիներ այդ հաւատով ապրողները բոլորն էլ դժոխքն են գնացել:

— Բոլորը:

— Ա՛ւա՛ ուրեմն, թող որ ես էլ այդ հաւատով դժոխքը գնամ, ուրիշ հաւատով ես արքայութիւն գնալ չեմ ուզում:



— Այդ անկարելի է, Մարիամ: Դու մի խեղճ և միամիտ կին ես, դու կամենում ես քեզ կորցնել, քեզ հետ էլ իմ երեխաներին: Բայց ես ընտանիքի հայր եմ, ես իմ ընտանիքի հոգու կորուստը չեմ կամենում, որովհետև ես ձեր բոլորիդ համար պատասխանատու եմ «Տիրոջ» առաջ: Դու պէտք է լսես իմ խնդրը. և պէտք է երեխաներիդ հետ միասին ընդունես այն հաւատը, որը ընդունել է քո ամուսինը:

— Բայց եթէ ես ընդդիմանամ:

— Այն ժամանակ դու կը կորցնես բոլորը, ինչոր քաղցր և ինչոր սիրելի է քեզ համար: Միևնույն վշտերն ու խռովութիւններն կը պատեն դարձեալ քեզ և քո բոլոր ընտանիքդ, և դու իրաւունք չես ունենալ դանդատուիլ քո թշուառութիւնից, որ առաջինից ծանր կը լինի...

Մարիամը ամբողջ մարմնով դողաց և մի քանի վայրկեան մնաց լուռ:

— Ի՞նչ ես վճռում այժմ, անողոք ձայնով հարցրաւ ամուսինը:

— Գրիգոր, աղաչաւոր ձայնով դարձաւ Մարիամը նրան, մինչև այսօր մեր տան խռովութիւնները գլխաւորապէս նրա համար էին, որ դու հաւատով բաժանուել էիր քո ընտանի-

քից և ես պահանջում էի որ դառնաս և միանաս նրա հետ: Գիտես թէ մենք միմեանց ի՞նչպէս էինք սիրում և մանաւանդ թէ գիտես որքան սիրում էի ես քեզ, ուստի մի վայրկեան անգամ ես չէի յօժարուիլ, որ դու ինձանից բաժանված լինիս ամենաաննշան զգացմունքով անգամ, ուր մնաց թէ հաւատով: Այս էր պատճառը, որ ես հէնց առաջին օրվանից շատ դառնութեամբ նայեցի քո հաւատափոխութեան վերայ, ես քեզ սկսեցի յաճախ յանդիմանել, հետզհետէ այդ յանդիմանութիւնները փոխվեցան կծու նախատինքների և յետոյ շատ անգամ կռուի... Այս բոլորը խռովեցին ու տակնուվրայ արին մեր տունը: Բայց ես զղջում եմ. ի գուր էին իմ յանդիմանութիւնները, ի գուր էին իմ նախատինքները: Դու սկզբից իսկ պէտք է ինձ խնայէիր, որովհետև քո արածը իմ կամքի հակառակ էր. իսկ դու սիրում էիր ինձ... Բայց երբ այդ սէրը քեզ չը կարողացաւ դարձնել քո թիւր ճանապարհից, իմ յանդիմանութիւնները ու նախատինքները, հարկաւ, ոչինչ աւելի չէին կարող անել: Ես սխալուեցայ մինչև այժմ իմ քո դէմ գործածներով, այժմ ես ներողութիւն եմ խնդրում: Սկսենք դարձեալ հաշտ և խաղաղ ապրել, սկսենք միմեանց



ուրախացնել... Ես մինչև այժմ ընդդէմ էի քո լուսէրական լինելուդ և տեսար թէ ունէի իրաւացի պատճառներ, բայց այժմ չեմ ընդդիմանում: Այժմ ազատ կարող ես քո ընտրած հաւատդ պաշտել, ես այլ ևս քեզ չեմ խանգարիլ, միայն դու էլ ինձ ու իմ երեխաներին ազատ թող մեր պապերի հաւատը պաշտելու, դու էլ մի խանգարիլ մեզ: Ես առաւօտ երեկոյ կ'երթամ իմ եկեղեցին, կ'աղօթեմ Աստծուն առաջվան պէս, կը խոստովանիմ քահանային իմ մեղքերը, ինչպէս միշտ, առանց ընդհատելու կը պահեմ իմ պահքը և նեղութեանց մէջ ընկած ժամանակ կը դիմեմ մեր սուրբերի բարեխօսութեանը: Այս հաւատով ապրել և մեռել են մեր պապերը, այս հաւատով էլ կամենում եմ, որ սպրեւք ու մեռնենք ես և իմ որդիքս...

— Ի՞նչ շատ խօսացիր, Մարիամ, պատասխանեց սակերիչը, բայց այդ խօսածներդ հետ ինձ համաձայնուել անկարելի է: Մենք մի ընտանիք ենք, մեր թէ կամքը և թէ մահը մի հաւատով պիտի լինի:

— Ուրեմն թող քո այդ նոր հաւատը և նորէն դարձիր քո պապերի և մեր հաւատին, այն ժամանակ մենք միահաւասար կը լինենք:

Աւելի լաւ է, որ մէկը շատերին հետ համաձայնի:

— Անկարելի է, ես իմ հաւատի ուղղութիւնը ճանաչելուց յետ նորէն մոլորութեան մէջ չեմ ընկնիլ, իմ հոգսը հէնց ձեզ այդ մոլորութիւնից հանելն է:

— Բայց եթէ ես ոչ մի կերպ չը համաձայնուիմ այս մոլորութիւնից դառնալու...

— Այդ հարցը մի անգամ արդէն արիւր և ես պրտասխանեցի թէ՛ դու կը թշուառանաս և կը թշուառացնես քո ընտանիքը:

— Բայց, Գրիգոր, եթէ դու և քո վարժապետները ուղիղ սրտով հաւատում էք Աստուծոյ բարութեան, դուք պետք է գիտենաք, որ նա ձեզ մարդիկներդ նման չար չէ, նա երբէք չի ցանկանալ, որ դու այս կամ այն հաւատը զօռով ընդունել տաս քո ընտանիքին, և եթէ նա այդ չը կամենայ ընդունել, չարչարես ու տանջես նրան: Աստուած երբէք չի կամենալ, որ մեր խաղաղ տան մէջ խռովութիւններ մտնեն այդ բանի համար, ուրեմն այդ քո լուսէրական վարժապետներդ էլ երբէք Աստծուն սիրելի մարդիկ չեն կարող լինել, որովհետև ինչ տուն որ մտնում են նրանք, ամեն տեղ խռովութիւններ ու զժտութիւններ են սերմանում: Ի՞նչ պէտք է



հեռանաս այդ մարդիկներից...

— Մարիամ, ես էլ երկար խօսել չեմ կամենում, դու պէտք է վճռաբար լայտնես ինձ, ընդունում ես իմ խնդիրը թէ ոչ:

— Ինչո՞ւմն է կայանում քո խնդիրը:

— Ահա թէ ինչում. առաջին՝ դու չը պէտք է այսուհետեւ եկեղեցի գնաս և ոչ երեխաներիդ տանես, այլ Կարօի կնոջ հետ նշանակած ժամին կը գաք մեր ժողովարանը և այնտեղ կ'անէք ձեր արթթքը. երկրորդ՝ կ'արգելես քահանաներին մեր տուն մտնել. երրորդ՝ կը թողնես բոլորովին պահք պահելը. չորրորդ կը մոռանաս քո այդ հազարու մի սրբերին ուխտ գնալը կամ մատաղներ մորթելը. հինգերորդ...

Այս խօսքերը խօսելու ժամանակ, Մարիամի դէմքը հետզհետեւ մռայլվում էր, կուրծքը բարձրանում էր և իջնում և սիրտը տրոփում էր այնպէս անհանգիստ, որ կարծէիք թէ պատրաստվում էր մի մեծ կռուի համար. վերջապէս նա ուղղուեցաւ աթոռի մէջ և բարկացալտ աչքերը սևեռելով ամուսնու աչքերին՝ խրոխտ ձայնով ընդմիջեց նրա խօսքը.

— Դ՛նւ քո մտքումդ հաստատապէս դրել ես, որ այդ բոլոր ասածներդ անել տաս ինձ:

— Այո՛, և ես այդ բանը խոստայել եմ մեր պատուօրին և քարոզին:

— Շատ ի քուր ես արել: Ես քո առաջարկածներից և ոչ մէկը պէտք է ընդունեմ: Ականջներդ բաց, լաւ լսիր և գնա՛ քո անխիղճ վարժապետներիդ էլ հասկացրո՛ւ, որ եթէ Գրիստոսի չարչարանքներն էլ տաք ինձ, ես ձեր պահանջածներից և ոչ մէկը պէտք է կատարեմ: Այս է իմ միակ և վերջին վճիռս: Այս ասելով նա արագութեամբ բարձրացաւ տեղից և ուղղուեցաւ դէպի դուռը:

— Մարիամ, Մարիամ, լսիր ինձ, տես թէ ի՞նչ եմ ասում, կոչում էր ամուսինը ետեւից:

— Ո՛չ, այլ ևս ես քեզանից ոչինչ լսել չեմ կամենում, և ոչ էլ երբեւիցէ քո երեսը տեսնել եմ ուզում: Իմ ամուսինը մի տարի սրանից առաջ է մեռել և ես այժմ այրի եմ... Այս ասելով նա զայրացած դուրս գնաց և դուռը բարձրաձայն փակեց իւր ետեւից:

Գրիգորը միառժամանակ մնաց իւր տեղը ընդարմացած և աչքերը ուղղած փակած դրաներ: Յետոյ նա տեղից վերկացաւ, առաւ վերարկուն և կրկին փակված դրանը նայելով մըմնջաց ինքն իրան. «Կամակոր կին, դու արեմն կամենում ես քո ամուսինը խայտառակել. լաւ, տեսնենք թէ քո այդ կամակորու-



Թիւնը մինչև ուր կը տանէ քեզ... Ես ամենից մեծ լիմարը կը լինիմ թէ թողնեմ քո գիտեցածիդ պէս երեսդ խաչակնքել անգամ: Մինչև այժմ ես քարոզչի պատուիրած քաղցրութիւնը գործ դրի, այսուհետև էլ Կարօի տուած խորհրդին կը հետևեմ»: Այս տխուր սպառնալիքներից լետ նա հազաւ վերարկուն և դուրս գնաց սենեակից...

Ս.մուսիսների այս վերջին բաժանումից լետ անցան երեք տարիներ, այս գերդաստանի համար երեք վշտալից տարիներ: Մարիամը հաստատ մնաց իւր վճռին, նա ոչ մի կերպ և ոչ մի պայմանով չը յօժարեցաւ ենթարկվել ամուսնու ներգործութեան և ընդունել բողոքականութիւն: Այս պատճառաւ ամուսինն էլ իւր կողմից, մանաւանդ իւր «եղբայրների» յորդորմամբ, անողոքելի մնաց իւր վճռի մէջ: Մարիամի իւրաքանչիւր անգամ եկեղեցի գնալը, իւր տան մէջ քահանայ ընդունելը, դրացիների հետ ուխտ գնալը, միով բանիւ նրա՝ իւր հաւատի վերաբերեալ ամենաչնչին հնաւանդ սովորութեան կատարումը պատճառ էր դառնում իւր ամուսնուց նախատուելուն, հայհոյուելուն և շատ անգամ այնպիսի կռուի, որը վերջանում էր նրանով, որ երբեմն սիրող ամուսինը սկսում էր ծեծել իւր կինը... Խեղճ

Մանիշակը շատ տնգամ մտնում էր այս վերջնակուիւների մէջ իւր մօրը պաշտպանելու նպատակաւ, բայց հօր հարուածներից իրեն էլ բաժին առնելով վշտահար և լալով քաշվում էր մի կողմ: Միւս երեխաները, որոնք անգոր էին իրանց մօրը պաշտպանելու, լաց ու գոռոցով ողբակցում էին նրան և իրանց քրոջը: Եւ այսպէս ամբողջ տունը շատ անգամ ներկայացնում էր մի աղիողորմ և սիրտ կտրատող տեսարան:

Ահա հէնց այս տեսարաններից մէկն էր, որին ընթերցողները հանդիսատես եղան այս պատմութեան առաջին գլխում:

2.

Ինչպէս իւր տեղը պատմեցինք և ինչպէս կը լիջեն ընթերցողները, երբ Խաթուն-մայրիկը Մարիամին ու նրա երեխաներին առնելով տարաւ իւր տունը, նրա ամուսնու, այն է վարպետ Սարգսի հրամանաւ մի քանի երիտասարդներ ոսկերիչ Գրիգորի ձեռքերը կապելով, ժամաւորների մեծ բազմութեամբ, տարան նրան գաւառապետի մօտ:

Ճանապարհին հետաքրքիր բազմութիւնը հետզհետէ խռնվում էր նրանց վերայ և այդպիսով բազմացնում այդ բողոքարկուների խումբը: Երբ նրանք հասան գաւառապետի



տունը, բագում կանգնած ոստիկանական պաշտօնեաները իսկոյն իմացում տուին այս տարօրինակ խնդրարկուների մասին թաղական ոստիկանապետին: Ոստիկանապետ Հայազգի Ռանիէլ—բէկը իսկոյն դուրս եկաւ նրանց առաջ, և շփոթուած սկսաւ Հարցնել թէ՛ ի՞նչ պատճառաւ այս մեծ ամբոխը այսքան վաղ հաւաքուել էր գաւառապետի բազը:

Ամբոխի միջից դուրս եկաւ վարպետ-Սարգիսը, բռնած ոսկերչի թևից և նրան առաջ քաշելով «Աղա, ասաց, մենք եկել ենք գաւառապետի մօտ նրա արդար դատաստանին մատնելու համար այս չարագործ մարդուն, որ ահա ամբողջ երեք տարիներ է, չարչարում, տանջում է իւր կնոջը և որդիներին, որոնց այսօր էլ մենք ենք ազատել սրա ձեռքից տանջուած և զանակոծուած»: Այս համառօտ բացատրութիւնից յետոյ վարպետ-Սարգիսը մի քանի բան էլ պատմեց ոստիկանապետին ոսկերչի քառամեայ անցեալից և լուեց: Ամբոխը հետաքրքրութեամբ սպասում էր ոստիկանապետի պատասխանին, բայց նա ոչինչ չը պատասխանեց, այլ միայն մի խորհրդաւոր ակնարկ ձգելով ոսկերչի վերայ, լուռ ու մուռնջ յետ դարձաւ և մտաւ տուն:

Անժոյժ երիտասարդներէջ ոմանք ատամնե-

րը կրճտում էին ոսկերչի վերայ, ուրիշները բռունցքներն էին շարժում, իսկ աւելի հասակաւորները խրատում էին նրանց չափաւորել իրանց զայրոյթը, յուսադրելով որ արդար դատաստանը յանցաւորին կը պատժէ ինչպէս վայել է:

Սակայն ոսկերչի վերայ այս սպառնալիքները ոչինչ ազդեցութիւն չէին անում, նրա դէմքը մինչև անգամ այլայլուած չէր, նա անխուով և անտարբեր նայում էր ամբոխին և երբեմն դէմքի վերայ խաղացնում էր ծաղրական ժպիտներ, որոնք աւելի գրգռում էին տաքարիւն երիտասարդների զայրոյթը:

Քառուրդ ժամից յետ մի ոստիկանական պաշտօնեայ դուրս եկաւ ոստիկանապետի գրասենեակից և ներս կանչեց ոսկերչին: Ամբոխից մի քանի մարդիկ էլ կամեցան ներս մտնել նրա հետ, բայց պաշտօնեան արգելեց նրանց ասելով, որ հրամայուած է միմիայն յանցաւորին ներս տանելու: Սրանից մի տասն րոպէ յետոյ դուրս եկաւ ինքը ոստիկանապետը և յայտնեց ամբոխին, որ գաւառապետը քնած լինելով, իսկոյն և եթ յանցաւորին դատի ենթարկել անկարելի է, ուստի երբ գաւառապետը կ'արթնանայ և ատեան կ'իջնէ, այն ժամանակ ինքը հարցաքննել կը տայ յանցա-



ւորին:—Նս ինքս, աւելացրաւ նա, ձեր կողմից թարգման կը կանգնեմ ձեր արդարացի բողոքին, որովհետեւ ձեր ինձ պատմածներէց ամեն բանի տեղեկացայ: Գնացէք իւրաքանչիւրդ ձեր գործին, և հաստատ հաւատացէք որ եթէ մեր քննութիւնից ոսկերիչը յանցաւոր դուրս գայ, նրան օրինաւոր պատիժ կը տանք:

«Այո՛, օրինաւոր օրինաւոր», գոչեցին մի քանիսը ամբոխի միջից և բոլորը միասին միամտուելով ոստիկանապետի խոստումով, ցրուեցան, և իւրաքանչիւրը գնաց իւր գործին:

Սակայն բոլոր ոսկերիչների և առաւօտեան բողոքին մասնակցող անձանց զարմացումը շատ մեծ եղաւ, երբ երկու երեք ժամից յետ նրանք իմացան, որ ոսկերիչ Գրիգորը ազատ, իւր «եղբայրների» հետ միասին, շտապում է եղել «Տիրոջ» տունը աղօթելու: «Ի՞նչ հանելուկ է այս, միմեանց մէջ շշնջում էին ոսկերիչները, եթէ ասենք փախել է, Գրիգորը այնքան սիրտ չ'ունի, որ կրկին բռնուելուց չը վախենայ, եթէ ասենք զաւառապետը ինքն է արձակել, դա էլ խելքից հեռու է: Ուրեմն մի աներևոյթ գորութիւն օգնութիւն է հասել նրան», — վերջապէս վճռեցին նրանք և լռեցին:

Սակայն հանելուկի լուծումը հետեւեալն էր: Մեր ծանօթ Կարօն, ոսկերչի հաւատակիցը, ամբոխից աւելի ճարպիկ էր շարժուել: Նա իւր «եղբայրակցի» գլխովն անցածը լսելուն պէս, վազեց քարոզչի մօտ, սա էլ իւր կողմից անյապաղ դիմեց պատարին, որը ըստ բերման բաղդին այդ օրերը դարձեալ այցելել էր իւր հօտին:

Այն միջոցին երբ լիշեալ բողոքարկուների խումբը հեռանում էր գաւառապետի տանից, պատարը նստած էր իւր մի բարեկամի մօտ և երկար խօսակցում էր նորա հետ: Աղա Յովակիմը, այսպէս էին անուանում պատարի բարեկամին, բաւական հարուստ մարդ էր: Նւ թէպէտ նա մի առանձին հասարակական պաշտօն չէր վարում, սակայն իւր նշանաւոր հարստութեան պատճառաւ քաղաքի մէջ նախանձելի դիրք ունէր բռնած: Նա համարվում էր միակ ամենակարող մարդը բոլոր քաղաքի մէջ: Նւ այս իսկ պատճառաւ նա միշտ շրջապատուած էր խնդրարկուներով: Նւ որովհետեւ իւր հարստութիւնը կապում էր նրան քաղաքի շատ առաջաւոր անձանց հետ, ուստի հազիւ էր պատահում որ նա իւր ձեռնարկութիւնները ըստ իւր ցանկութեան չ'վերջաւորէր և կամ իրեն դիմող նեղեալներին



ձեռնունայն դարձնէր: Այսպիսով նա շատերին էր օգնում իրանց թշուառութեանց և կարօտութեանց մէջ: Մի բան միայն նսեմացնում էր նորա բոլոր այդ բարեգործութեանց փայլը, և յայդ այն էր՝ որ այդ մարդը գործում էր ոչ թէ խկապէս բարեգործութիւնից դրդուած այլ ծայրայեղ փառամոլութիւնից: Նորա գուարճութեան չափ չէր լինում երբ տեսնում էր թշուառներին՝ իւր առաջ ծնկաչոգ և աղաչաւոր, կամ երբ փողոցով անցնելիս՝ երբեմն իրենից բարեբարեալ մարդիկները՝ մինչև գետին գլուխ էին խոնարհեցնում նորան: Այս իսկ պատճառաւ նա շատ անգամ անխտիր օգնութեան ձեռք էր կարկառում և չարագործներին, միայն թէ այդ բանը աւելացնէր նորա համար դարձեալ մի տասնեակ երկրպագուներ:

Պատօրը վաղուց ծանօթ էր աղա Յովակիմի հետ և քաջ ուսումնասիրած էր նորա թող կողմերը: Այս պատճառաւ և այսօր ամենայն վստահութեամբ դիմել էր նորան: Սակայն որքան սեծ եղաւ իւր գարմանքը երբ տեսաւ թէ աղա Յովակիմը այս անգամ իւր խնդիրը կատարելու համար դժուարութիւններ էր ցոյց տալիս: Բայց և այնպէս նա իսկոյն չվհատուեցաւ: Նա լաւ գիտէր որ իւր բարե-

լարը այն մարդիկներից չէր, որոնք կապարի ծանրութիւն ունին և որոնց շարժելու համար շատ անգամ մեծ աշխատութիւններ են հարկաւոր: Այստեղ բաւական էր մի երկու մարդահաճ խօսքեր և բերդը առնուած էր: Աղա Յովակիմի բացասական յայտարարութեանը պատօրը պատասխանեց. — «Ճմարիտը խոստովանած, աղա Յովակիմ, դուք այս անգամ ինձ զարմացնում էք: Դժուար է գտնել այս քաղաքում մի մարդ, որին կարելի լինէր համոզել թէ՛ աղա Յովակիմը այս ինչ գործը կամեցաւ և չը կարողացաւ կատարել. կամ թէ նա հրամայեց և նորա հրամանը անկատար մնաց: Դուք իրաւամբ ժառանգած էք ամենակարող անունը, և դուք չպէտք է դաւաճանէք այդ անուանը: Ոչ մի արգելք կամ ոչ մի դժուարութիւն մենք չենք ճանաչում որը կարողանար դիմադրել ձեր հրամանին, ուստի ի՞ գուր էք բարեհաճում համոզել ինձ որ իմ ամենախոնարհ խնդրի կատարումը ձեր կարողութենէն վեր է: Բայց եթէ արդարև դուք կատակ չէք անում, եթէ դուք իջել էք այն բարձրութիւնից, որի վերայ մինչև այսօր կանգնած էիք և կարողութեամբ հաւասարուել էք միւս հասարակաստեղծ մարդիկներին հետ, լաւ է միանգամով հրամայէք մեզ տկար-



ներին գնալ և շուրը թափուիլ քան ապրիլ, որովհետև ինչ արժէք ունի այլ ևս մեր կեանքը առանց աղա Յովակիմի հայրախնամ պաշտպանութեան...»: Այստեղ պատուով մինչև անգամ կամեցաւ մի քանի կաթիլ արտասուք իջեցնել իւր տխուր երեսի վերայ, սակայն տեսնելով որ դերասանութեան այդ դժուար դերը իրան չէ յաջողում, շարունակեց. — «Ասացէք, կաղաչեմ, աղա Յովակիմ, ո՞ւմ դիմեն այսուհետև կարօտեալները. ո՞ւմ դիմեն մարդկային չարագործութեանց ենթակալ տառապեալները, ո՞ւմ դիմէ իրաւազուրկ այրին, ո՞ւմ դիմէ անօգնական որբը... մտածեցէք, աղա Յովակիմ, մտածեցէք մի ըոպէ, թէ քանի՞ քանի՞ թշուառներ ապրել և շնչել են ձեզանով և թէ դեռ քանիսի՞ն այսուհետև պէտք է շունչ և հոգի տաք դարձեալ դուք: «Չեմ կարող» խօսքը ձեր բարի լեզուի վերայ շատ խորթ է հնչիւմ, ի սէր Աստուծոյ, մի արտասանէք դուք նորան և մի լուսահատեցնէք մեզ...»:

Պատուորի այս հաճոյախօսութիւնը սպասուած ազդեցութիւնը արաւ: Նորա մանաւանդ վերջին խօսքերը այն աստիճան գգուեցին աղա Յովակիմի փառամոլ ինքնասիրութիւնը, որ նա այլ ևս պատուորին դիմադրել չկարողացաւ. «շատ լաւ, շատ լաւ, ես այդ մասին

կաշխատեմ, ասաց նա նորան. դուք անհոգ կացէք»:

— «Շնորհակալ եմ, ով հասարակաց բարերար, բիւր անգամ շնորհակալ: Դուք միշտ պիտի փառաբանուիք քանի կենդանի էք և ձեր լիշատակը պիտի օրհնուի դարերի ընթացքում, երբ դէպի հանդերձեալ կենաց երանութիւնը փոխուիք»: Այս ասելով պատուորը բարձրացաւ աթոռից և մինչև գետին խոնարհելով ողջունեց աղա—Յովակիմին և դուրս գնաց: Փոքր ժամանակից լետ դուրս գնաց տանից և Աղա Յովակիմը իւր գեղեցիկ ձիով երայ նստած, որին հետևում էր մի հետեւակ ծառայ: Նոքա երկուսը միասին դիմում էին դէպի քաղաքի ներքին մասը: Սորանից մի քանի ժամից լետոյ ոսկերիչ Գրիգորը քաղաքի մի գառիվեր փողոցով բարձրանալով դիմում էր պատուորի տունը: Իւր լուտերականութիւն ընդունելուց լետոյ առաջին անգամն էր որ նա օրհնում էր հարստութիւնը և խոստովանում էր որ ոսկին ամեն բանից զօրեղ է...

Այս անցքից ճիշդ տասն օր լետոյ, մեր լրագիրներից մէկի մէջ տպուած էր հետեւեալ լուրը. — «Մեզ գրում են Շ. քաղաքից, որ այնտեղի հայ լուսաւորչականները խմբովին յարձակուելով մի բողոքական արհեստաւորի



տան վերայ, ծեծել և անպատուել են թէ տան տիրոջը և թէ նրա ընտանիքին և քարերուով կոտորտել են տան պատուհանները: Ոստիկանութիւնը հասնելով հազիւ ազատել է կատաղի ամբոխի ձեռքից անմեղ գոհերին»: Այս լուրը իւր ժամանակին ի հարկէ վրդովել է ընթերցող հասարակութեան ազնիւ մասի սրտերը և նրանց զայրոյթը վառել այդ մոլեռանդ հայ լուսաւորչականների դէմ: Սա կայն իմ ընթերցողները տեսան, որ այդ զայրոյթը անտեղի է եղած... Միայն ցաւալին այն է, որ այդ տեսակ խեղաթիւրեալ լուրերի մէջ գա առաջինը չէր և վերջինն էլ չէ լինելու:

Ոսկերիչը «Տիրոջ» կամեցողութեամբ այսպէս հրաշքով ազատուելուց չեա, պատօրի հրամանաւ շտապեց, գտաւ «եղբայրներին» և նրանց հետ միասին գնաց իրանց աղօթատեղին գոհութիւն մատուցանելու Աստուծուն: Եւ ահա հէնց այս միջոցին տեսել էր նրան ոսկերիչներից մէկը և նրա ազատուելու լուրը տարել իւր արհեստակիցներին, որոնք այսուամենայնիւ նրան նորէն խանգարել չը կարողացան... Պատօրն էլ իւր ժամանակին հասաւ «եղբայրներին» ժողովարանը: Այստեղ նա հանդիսաւոր գովեստներ նուիրեց Գրիգոր եղբօրը, որը «Տիրոջ» ընտրեալ հօտը բազմացնելու նպա-

տակաւ այնքան ջերմեռանդութեամբ էր աշխատել, որ իւր կեանքն անգամ ենթարկել էր վտանգի: Այդպիսով, ասում էր նա ոսկերչին, դու վարուել ես «Տիրոջ» այն պատուէրի համաձայն, որ մեզ սովորեցնում է թողնել հայր, մայր, կին և որդիք և մեր խաչն առնելով գնալ իւր ետեւից: Իու արել ես այն, ինչոր ի հնումն անում էին Պետրոս և Պօղոս առաքեալները և նրանց պէս ենթարկուել ես հալածանքների: Իուցէ դեռ «Տիրոջ» կամեցողութեամբ նրանց պէս չարչարանքներ էլ պիտի կրես, բայց իմացած եղիր, որ նրանց չափ էլ պիտի վարձատրուիս յաւիտենականութեան մէջ»: Այս և սրանց նման խօսքերով պատօրը խրախուսում էր Գրիգորին և միւս եղբայրների մէջ վառում էր նախանձաւորութիւն նրան հետեւելու համար:

Այս օրուանից ոսկերիչ Գրիգորը, ըստօրում բաւական յառաջադիմութիւն էր արել սուրբ գրոց ընթերցանութեան մէջ, կարգուեցաւ քարոզչի օգնական: Սա մի պաշտօն էր, որ «եղբայրների» մօտ նրա պատիւը բաւական բարձրացնում էր:

Ոսկերիչը Եսաւի նման ուրախացել էր այս ոսպաթանով և բնաւ չէր մտածում իւր վաճառած անդրանկութեան, կամենում եմ ասել



իւր կորցրած երջանկութեան, իւր կնոջ և երեխայոց վերայ...

Բայց այժմ մենք դառնանք նրանց մօտ:

**Է.**

Վարպետ Սարգսի տան մի ընդարձակ սենեակի մէջ նոյն օրը անկողնում հիւանդ պառկած էին Մարիամը և նրա մօտ իւր մի տղայ երեխան, որը այս անցքից մի քանի օր առաջ հիւանդացած էր պարանոցի ուռույցքով: Մանիշակը տխուր և գունաթափ դէմքով կծկուել էր մօր սնարների մօտ:

Տանտիկինը և հարսները նոյնպէս բոլորած էին Մարիամի շուրջը: Խաթուն-մայրիկը տեսնելով թէ այս տխուր անցքը որքան մահացու կերպով ազդել էր խեղճ կնոջ վերայ, աշխատում էր, որքան իւր ճարտարախօսութիւնը ներում էր, լուսադրել և մխիթարել նրան: Բայց վերջինս միշտ անմխիթար էր: Մանաւանդ երբ նրան խօսում էին ամուսնու դարձի մասին, որի համար նա կորուսած էր բոլոր լոյսը. խեղճ կինը խորը հառաչում և արցունքներ էր թափում, առանց խօսել կարողանալու: Երբեմն գառանցման մէջ նա մրմնջում էր: «Այս խայտառակութիւնը միայն ինձ գերեզման կը տանէ... Ես դարձեալ կարող էի իմ տառապանացը տանել, եթէ միայն իմ

տան գաղտնիքները այսքան աշկարայ հրապարակ չը հանուէին...»:

Եւ արդարև նա աւելի մեծամեծ նեղութեանց էլ կը համբերէր, եթէ միայն իւր ցաւերը լսի իրան յայտնի լինէին, եթէ միայն ուրիշները չ'իմանային՝ թէ իւր երբեմն երջանիկ ընտանիքը թշուառացել է, թէ իւր ամուսինը ամբոխի ձեռքով քարշուած է դատարան և թէ ինքը իւր երեխաներով փախած է իւր սեփհական տանից և ապաստանած է իւր դրացուն: Սրանք բոլորը իւր համար մի-մի մահացու հարուածներ էին: Որքան շատ նա տանջուել է, որքան շատ զրկանքներ կրել, բայց նրա ձայնը, նրա տրտունջը ոչոք չի լսել: Եւ այս ոչթէ պէտք էր վերադրել նրա երկչտութեան, ոչ, այլ առաքինի և անստգիւտ պարկեշտութեան: Մի կին որ սիրում է իւր ընտանիքը և ապրում է միայն նրա համար, երբէք չէ կամենում այդ ընտանեաց խայտառակութիւնը իւր մով տեսնել: Ամեն գփտութիւններ, ամէն անբաւականութիւններ նա ծածկում է իւր համբերութեան վարագուրի տակ: Նա ինքը միայնակ նահատակ է հանդիսանում ամեն ընտանեկան փոթորիկների ժամանակ, խռովութեանց բոլոր ալիքները փշրվում են նրա



տկար գլխին, նա բոլորին տանում է արիութեամբ, միմիայն նաւի ղեկը ալիքներին չը մատնելու համար, միմիայն իւր տունը կատարեալ քայքայման չը հասցնելու համար...

Սրգեօք ի՞նչ կարծիք ունին այսօրինակ կանանց վերայ մեր մայրաքաղաքի հայ տիկիները, որոնք շատ անգամ իրանց գլխարկների մի ոսկեփայլ փետուրի պատճառով տակնուվրայ են անում ամբողջ ընտանիքը:

Գաւառացի հայ կանայք, գաւառացի հայ մայրեր, որքան շատ փոքր ենք ճանաչում մենք ձեզ, որքան շատ փոքր ենք ծանօթ ձեր արժանաւորութեանց և առաքինութեանց հետ: Մեր լուսաւորուածները շլանում են երբ զարգացած հասարակութեանց մէջ հանդիպում են մի կնոջ, որ իւր բնական տկարութեան մէջ ցոլացնում է մի գօրեղ առաքինութիւն, կամ յափշտակվում են, երբ բանաստեղծի երեւակայութեան մէջ ծնունդ և ապրող կանանց սլատմութիւններն են կարգում: Բայց միսխալուէք, բարեկամներս, կամ մի դարձրէք ձեր երեսը դէպի այս աղքատիկ տնակները, ուր ծնուել էք և ուր անցուցել էք ձեր մանկութիւնը: Մտէք այս ծխոտած յարկերի տակ, ուր ձեր կարծիքով ոչինչ վսեմ և բարձր չը կայ. քննեցէք այստեղ ապրող կանանց, ձեր մայրերի ու քոյ-

րերի կեանքը, բարքը և սովորութիւնները, և զարմացմամբ կը բացականչէք. «որքան պակասաւոր են դեռ մեզ շլացնող կանայք իրանց առաքինութեանց մէջ, որքան պակասութիւններ ունի դեռ բանաստեղծի գրիչը և երեւակայութիւնը»:

Մարիամի տկարութիւնը ժամէ ժամ աւելանում էր: Կէսօրի մօտ նա սաստիկ տենդի մէջ էր գտնվում և գրեթէ զգայազուրկ ընկած էր անկողնի վերայ:

Բայց մի ուրիշ վիշտ էլ աւելացաւ Խաթունմայրիկի և մանաւանդ նրա որդի Աշոտի համար: Նոյն աւուր երեկոցեան պահուն գլխի պտոյտով և տենդով հիւանդացու և Մանիշակը: Նախնիքայ գիշերը ամբողջ մի քանի ժամ սառնամանեաց մէջ բարակ հագուստով մնացել էր խեղճ աղջիկը և ցուրտը թափանցել էր նրա ոսկորների մէջ: Թէպէտ հիւանդութիւնը վտանգաւոր ելք էր գուշակում, բայց Աշոտի բերած բժիշկը, մահտեօի-Յարութիւնը, հաւատացնում էր բոլորին, որ նրա հիւանդութիւնը շատ թեթեւ տեսակին է պատկանում: «Մի փոքր մըսել է, ասում էր նա, մի դեղ կը տամ և մինչև առաւօտ ամեն բան կ'անցնի»: Սակայն հետեւալ առաւօտը հիւանդի դրութիւնը աւելի վատթարացաւ:



Սրան էլ կարծես հետևում էր եղբայրը: Նրա պարանոցի ուռուցքը աւելացել էր, գրեթէ երեկվայ տեղափոխութեան ժամանակ ցուրտ առնելու պատճառով: Մահտեսի-Յարութիւնը խորհուրդ տուաւ, որ թոյլ տան իրան երեխայի ուռուցքը հերիւնով (նաշգար) պատռելու. նրան ոչոք չ'ընդգիծացաւ, սակայն այդ գործողութիւնը աւելի ևս բորբոքեց նրա պարանոցի վերքը, և ուռուցքը աւելացրաւ:

Այն սենեակը, ուր պառկած էին հիւանդները, մտնողի վրայ շատ տխուր տպաւորութիւն էր անում: Մայր, աղջիկ և տղայ մի շարքով տարածուած հեծում էին հիւանդութեան ծանրութեան տակ: Ոչ մէկը միւսից աւելի յուսալի դրութեան մէջ չէր գտնվում:

Խաթուն-մայրիկը և իւր հարսները կրկնապատկում էին իրանց ջանքերը: Նրանք կարծես թէ մոռացել էին իրանց տան հոգսերը, և միմիայն հիւանդներով էին զբաղուած: Որքան դեղ ու դարման գիտէին, թէ իրանց բժիշկը, թէ իրանք և թէ ազգական այցելուները, բոլորը գործ էին գնում: Աշոտը նույնպէս թողած իւր պարապմունքը, ամբողջ օրը այս ու այն կողմն էր վազվզում, երբեմն բժիշկ մահտեսու ետևից, երբեմն դեղատուն, երբեմն շուկայ և այլն, իսկ այս գործերը կա-

տարելուց լետ գալիս էր և լուռ ու մունջ նստում Մանիշակի անկողնի մօտ: Նա աչքերը անթարթ ուղղում էր նրա դէմքի վրայ, որպէսզի հիւանդը որևէ պահանջ ունենալուց ինքը պատրաստ լինի: Նա գիշերներն անգամ իւր մօր հետ միասին անքուն հսկում էր հիւանդների մօտ, չը կամենալով ոչոքին յանձնել մանաւանդ Մանիշակի խնամատարութիւնը:

Ընթերցողը անշուշտ չիշում է, որ չորս տարի սրանից առաջ վարպետ Սարգիսը ոսկերիչ Գրիգորի մօտ, հացկերութեան ժամանակ, խնդրեց վերջինից Մանիշակի ձեռքը իւր Աշոտի համար, և որ այս խնդիրը կատարուեցաւ բոլոր հիւրերի համաձայնութեամբ և նրանց կենաց համար բաժակներ գատարկելով: Ծնողների խօսածները լոկ խօսքեր չը մտացին. այդ օրից սկսած Աշոտը սկսաւ առանձին համակրութեամբ վերաբերուիլ դէպի մանկահասակ օրիորդը: Մի քանի ժամանակից լետ այդ համակրանքը փոխուեցաւ սիրոյ, որը հետզհետէ սկսաւ աճիլ պատանու սրտի մէջ և խորը ատամներ ձգել: Թէպէտ ինքը իբրև գաւառական համեստ քաղաքի ծնունդ, և որ աւելին է, արհեստաւոր դասին պատկանող, երբէք չէր կարողանում պարկեշտութեան սահ-



մանից ելնելով մի որևէ խոստովանութիւն անել օրիորդին կամ նրա մօրը, սակայն օրիորդի վերաբերմամբ իւր ունեցած վարմունքը այս քանի տարում, ոչինչ կասկած չէին թողել Մարիամի մէջ, որ երիտասարդը կատարելապէս նուիրուած էր իւր աղջկան: Միայն նա, ձախող և վերահաս հանգամանքները միշտ աչքի առաջ ունենալով՝ իւր կողմից չը հասկանալուն էր տալիս: Ինչ կը վերաբերի Մանիշակին, նա նույնպէս անտարբեր չէր գէպի երիտասարդ Աշոտի զգայմունքը, սակայն իւր վարմանց մէջ այնքան էր համեստ, որ մօր սրտոնց աչքերն անգամ նրա մէջ ոչինչ կասկածելի հետքեր չէին նշմարում:

Իսկով սոկերչին, նա այնքան էր զբաղած իւր «Տիրոջ հօտի» գործերով, որ այս տեսակ բաներով բնաւ չէր հետաքրքրվում, իսկ վարպետ Սարգսին արած խոստումը վաղուց թռել էր նրա լիշողութիւնից:

Այսուամենայնիւ վարպետ Սարգսիսը և Խաթան-մայրիկը յաճախ իրանց տանը խօսում էին Մանիշակի վերայ, իբրև իրանց ապագայ հարսի, գովում էին նրան թէ իբր կատարեալ տնտեսուհի և թէ քաջ ձեռագործող և յորդորում էին Աշոտին աշխատել նրա համար արժանաւոր փեսայ լինելու:

Չը նայելով որ Աշոտի ծնողաց համար այս ամուսնութեան խնդիրը մի վճռուած գործ էր, այնուամենայնիւ նրանք էլ այս մասին ոչինչ չէին խօսում Մանիշակի ծնողաց հետ, այլ սպասում էին, մինչև որ Աշոտի համար առանձին խանութ կը բանային և նա կ'սկսէր իւր եղբարց պէս առանձին հաց աշխատել, իբր իւր գերգաստանի մի կարող անդամ: Այս վերջին ակնկալութիւնն էլ կատարուած էր: Վարպետ Սարգսիսը և իւր կինը պատրաստվում էին այդ օրերը իրանց հարսներից և ազգականուհիներից մի քանիսին պաշտօնապէս խնամախօս զրկել սոկերչի տունը Մանիշակի համար, երբ ահա մեզ ծանօթ աղետալի անցքը մէջ ընկաւ և բոլորի յոյսը խափանեց...

Այժմ Աշոտը բեկուած սրտով նստած էր իւր հիւանդ սիրուհու մօտ, գիտում էր նրա անզօր շարժումները, նրա դալկացած դէմքը, լսում էր նրա նուազած ձայնը, նրա հեծեծանքը և հառաչում էր խորին յուսահատութեամբ:

Մի օր, երբ նա ըստ սովորականին գտնուում էր հիւանդի մօտ, Մանիշակը ջուր խնդրեց, նա իսկույն բարձրացաւ տեղից և գաւաթը մօտեցրաւ նրան:

Մանիշակը աչքերը բացաւ ջուրը առնելու



և Աշոտին տեսնելով՝ նուազ ձայնով սասց.  
«Դարձեալ դ՞ու ես, Աշոտ»:

— Այո՛, ես եմ Մանիշակ, նեղանում ես,  
որ ես եմ քեզ ջուր տալիս, պատասխանեց  
երիտասարդը:

— Այո՛, նեղանում եմ, շատ եմ նեղանում:  
Հապա դու ե՞րբ պէտք է հանգստանաս, մի՞թէ  
խեղճ չեն քո ծնողները, մի՞թէ մեզ համար  
բարութիւն արած կը լինիս, երբ դու էլ հի-  
ւանդանաս:

— Եթէ դուք հիւանդացել էք, ի՞նչ մեծ  
բան է, եթէ ես էլ հիւանդանամ:

— Մենք մեր հօր մեղաց համար տանջվում  
ենք, իսկ դու ինչո՞ւ համար պիտի տանջվիս,  
խեղճ տղայ: Այս ասելուց յետ նա մի փոքր  
լուեց և ապա հարցրաւ.— Ուրիշ ո՞վ կայ սե-  
նեակում, Աշոտ:

— Ո՛չ ոք:

— Իսկ մայրս, արթուն չէ:

— Ո՛չ, մի ամբողջ ժամ է արդէն, որ նա  
հանգիստ քնած է:

— Լաւ է, որ քնել է, նա այս գիշեր շատ  
է տանջվել: Այստեղ կանգ առաւ օրիորդը  
և դարձեալ փոքր լուութիւնից յետ նորէն  
սկսաւ.— Աշոտ, մի՞թէ կարծում ես թէ ին-  
չանից ծածուկ է, որ դու ինձ սիրում ես:

— Ի՞նչպէս Մանիշակ... կարմրելով և շփո-  
թուած հարցրաւ երիտասարդը:

— Ա՛յնպէս, դու ինձ սիրում ես, ես այդ  
վաղուց գիտեմ, գիտեմ նոյնպէս որ շատ ես  
սիրում, շնորհակալ եմ, Աշոտ, բայց մի բան  
կայ, որը դու մինչև այսօր դեռ չը գիտես.  
Ես պէտք է այն էլ ասեմ քեզ:

— Ի՞նչ բան, մի փոքր սիրտ առնելով,  
բայց համեստութեամբ հարցրաւ Աշոտը:

— Ա՛յն, որ ես էլ քեզ եմ սիրում և շատ  
ժամանակ է, որ սիրում եմ, այսինքն այն  
օրից, երբ մեզ ամուսնացնելու համար մի-  
մեանց խօսք տուին մեր հայրերը:

Աշոտի երեսը կրկին շառագունեցաւ, նա  
չէր համարձակվում սիրուհու աչքերին նայե-  
լու, մինչև որ վերջինս կրկին սկսաւ խօ-  
սել:

— Բայց գիտես, Աշոտ, թէ ինչո՞ւ համար  
այդ խոստովանութիւնը արի քեզ, այդ նրա  
համար, որ ես շուտով պէտք է մեռնիմ, ուս-  
տի չ՛ուզեցի, որ իմ այդ գաղտնիքը ինձ հետ  
գերեզման տանեմ և որ դու յաւիտեան երկ-  
միտ չը մնայիր թէ՛ արդէօք Մանիշակն էլ  
սիրում էր քեզ...

— Մանիշակ, ինչո՞ւ այդպէս տխուր բան եր  
ես խօսում, ինչո՞ւ պէտք է մեռնիս դու...



բայց երիտասարդը չը կարողացաւ շարունակել իւր խօսքերը, արտասուքը խեղդեց նրան և նա սկսաւ լալ:

— Դու լալիս ես, Աշոտ, երանի՛ քեզ, գոնէ մի փոքր կը հանգստանաս, բայց իմ արտասուքներս վաղուց արդէն շատ լալուց ցամաքել են...

— Ա՛խ, Մանիշակ, Մանիշակ... այս ինչ արիւր դու ինձ, հեկեկալով խօսում էր երիտասարդը, երանի՛ թէ ինձ ոչինչ չը լայտնէիր, երանի՛ թէ ես միշտ այնպէս կարծէի, թէ դու ինձ երբէք չես սիրել, գոնէ այն ժամանակ ես մի փոքր հանգիստ կ'ունենայի, իսկ այժմ... այժմ փոքր է մնում թէ խելքս գլխէս թուցնեմ...

— Բնաւ, սիրելի Աշոտ, բնաւ մի նեղսրտիր, թշուառը ես եմ: Ես կը մեռնիմ, մի փոքր ժամանակ ինձ համար սուգ կարելի է կը պահես, այնուհետեւ իմ լիշատակը քո սրտից էլ կը կորչի...

— Մանիշակ, դարձեալ նոյն խօսքերն ես խօսում, Մանիշակ, մի՞ թէ ինձ չես խղճում...

— Թո՛ղ, մի կտրիր խօսքս: Ասում եմ, որ իմ լիշատակը քո սրտից էլ կը կորչի, այն ժամանակ դու քեզ համար ուրիշ հարմանցու կ'ընտրես, դու կ'ամուսնանաս, դու երջանիկ

կը լինիս... բայց մի վերջին խնդիր ունիմ, նա էլ պէտք է կատարես, այսինքն այն, որ երբեմն-երբեմն իմ գերեզմանիս այցելութեան գաս, քո կիներն էլ հետդ կը բերես և կ'ասես նրան թէ՛ «այս խեղճ աղջիկը սիրում էր ինձ»... Յետոյ կը պատմես նրան իմ դժբաղդութիւնները, որովհետեւ դու բոլորը տեսել ես, դու բոլորը գիտես. գուցէ նա էլ կը խղճայ և մի անգամ «ողորմի» կ'ասէ ինձ...

Երիտասարդի սիրտը կսկծից մորմոքվում էր: Նա նմանվում էր այն թշուառ ծնողին, որը եկել է տեսնելու նաւաստիների ձեռքով ցամաք հանուող խեղդուածներին և նա նոցա մէջ յանկարծ ճանաչում է իւր եօթ տարիներից ՚ի վեր կորուսած միամօր զաւակը: Անլուր թշուառութիւն. նա գտնում է իւր որդին, բայց աւաղ, հաւաստիանալու համար միայն՝ որ նա յաւիտեան կորած է իւր համար...

Այս դրութեան մէջ էր գտնվում և Աշոտը իւր սիրուհւոյ խոստովանութիւնը լսելուց յետոյ. նա տանջվում էր, նորա երակների մէջ արտասուք էին հոսում, բայց ոչինչ չէր կարողանում անել, ոչինչ չէր կարողանում խօսել, նա լալիս էր...

Վերջապէս Խաթունի հարսներից մէկի ներս



գալովը տխուր տեսարանը փակուեցաւ: Աշոտը շատ այլալլուած դուրս գնաց սենեակից:

Այդ օրից սկսած մեր խեղճ սիրահարը ամեն բան մոռացաւ: Նա այժմ աւելի դժբաղդ էր համարում իրան, քան այն ժամանակ, երբ դեռ չը գիտէր թէ Մանիշակը սիրում էր իրան: «Երանի թէ նա այդ խոստովանութիւնը չ'անէր ինձ», յաճախ կրկնում էր նա: Որովհետեւ Մանիշակի հետ ամուսնանալու յուսով իւր ունեցած ցնորքները, երջանիկ ապրելու նախագծերը, — բոլորը իւր սիրուհու արած տխուր գուշակութիւններով ցնդվում էին օդի մէջ: Նա այժմ իրան զգում էր աշխարհի մէջ միայնակ և ամեն բարեմասնութիւններից զուրկ...

Եթէ հայրը երբեմն յորդորում էր նրան դնալ շուկայ և օրվայ մէջ գէթ մի քանի ժամ խանութ բանալ, նա դառնութեամբ պատասխանում էր.

— «Այսուհետեւ այդ ո՛ւմ համար անեմ, իմ աստղը ջուրն է ընկել:» Խեղճ երիտասարդը իւր սիրուհուն կրկին առողջ տեսնելու համար բոլոր յոյսը կորուսել էր: Շատ անգամ մայրը նրան յուսադրում էր, սիրտ էր տալիս, զանազան օրինակներ էր բերում այդ տեսակ հիւանդութեամբ հիւանդացողներից, որոնք

այսուամենայնիւ, քիչ ժամանակից լետ կատարեալ առողջութիւն են ստացել, բայց երիտասարդը միշտ անմխիթար էր: Նա այժմ հուսատու՛մ էր աւելի Մանիշակի արած գուշակութիւններին, մանաւանդ երբ տեսնում էր, որ երեք հիւանդներն էլ օրըստօրէ վատթարանում էին և մահտեսի Յարութիւնը առաջուան պէս յուսով չէր խօսում նրանց առողջանալու համար:

Հետաքրքիր ընթերցողը կը ցանկանայ իմանալ թէ այդ ընդհանուր դժբաղդութեան ժամանակ ո՛ւր էր ոսկերիչ Գրիգորը, ինչո՞վ էր զբաղուած և արդեօք չէ՞ր հետաքրքրվում իմանալու համար՝ թէ ո՛ւր են գտնվում իւր կիները, աղջիկը և երեք որդիները: — Ոսկերիչը այն օրից, երբ քարոզչի օգնական դարձաւ, ընկերհարեանի նախատինքներից ազատուելու և «Տիրոջ հօտին» անձնուիրութեամբ ծառայելու համար, «եղբայրների խորհրդով, հաւաքեց իւր խանութը, իսկ իւր ունեցած երեք հազար ռուբլին յանձնեց պատուօրին, որ նա իւր կողմից զրկէ մայրաքաղաքի բանկը շահեցնելու համար: Վերջին անցքերից լետ նա գրեթէ ամբողջ օրերը անցնում էր պատուօրի, քարոզչի և «եղբայրների» հետ: Իսկ սրանցից և ոչ մէկը նրա ընտանեաց մասին նրա հետ



ոչինչ չէր խօսում: Ինքը ոսկերիչը համոզուած էր, որ նրանք թէպէտ այսօր զայրացած և դուրս գնացած են, սակայն վաղը անշուշտ կը դառնան իրանց տունը: Այդ յուսով նա մի քանի վաղիւներ անցկացրաւ առանց իւր ընտանեաց դարձը տեսնելու: Այսուամենայնիւ դեռ յոյսը չէր կտրում, որպէսզի անմիջական միջոցներ գործ զնէր նրանց յետ դարձնելու համար: Մի կողմից էլ նա այսպէս աւելի համազօտ էր գտնում իրան, մանաւանդ երբ «եղբայրները» ժողովուած էին իւր մօտ: «Գոնէ համազամանքի բերումից օգուտ քաղեմ, քանի ժամանակ ունիմ, ասում էր նա, գիտեմ որ վերջիվերջոյ գլխիս պէտք է թափուին»:

Բայց այստեղ հիւանդների դրութիւնը օրէցօր ծանրանում էր. ութ օրից յետ վերջապէս մահտեսի-Յարութիւնը խորհուրդ տուաւ վարպետ Սարգսին ռուսի դօկտօրը բերել հիւանդներին նայելու:

— Ուրեմն դու քո բժշկութեան բոլոր պաշարը սպառեցիր հարցրաւ մահտեսուն վարպետ Սարգսին:

— Ինչ որ գիտէի գործ գրի, բայց ի՞նչ անեմ, որ լաւանայու նշույլ չէ երևում:

— Ինչո՞ւ առաջ չէիր ասում այդ:

— Առաջ երեքի հիւանդութիւններն էլ ինձ

ծանօթ էին երևում և ես յոյս ունէի թէ կ'առողջացնեմ, բայց այժմ տեսնում եմ, որ միեակ ինձմով բան չէ դառնալու:

Վարպետ Սարգսին բարկութեամբ գլուխը շարժելով դուրս գնաց և Աշոտին զրկեց դօկտօրի ետեւից:

Մի ժամից յետ դօկտօրը եկաւ, մի բարձրահասակ և ազնուադէմ մարդ: Նա քաղաքավարութեամբ մօտեցաւ առաջ Մարիամին, հարցրաւ հիւանդութեան որպիսութիւնը վարպետ Սարգսից և մահտեսի-Յարութիւնից, որովհետև հիւանդի մէջ խօսելու կարողութիւն չը կար, յետոյ բռնեց բազկերակը, երկար քննեց կուրծքը, և ապա բարձրանալով թեթեւ շարժեց գլուխը և անցաւ դէպի Մանիշակը: Նոյն քննութիւնները կատարեց և օրհորդի վերայ: Հետզհետէ բժշկի դէմքը մռայլվում էր. նրա ժպտող երեսը այժմ արտայայտում էր գայրոյթ և բարկութիւն: «Շատ ուշ է, իմ պարօններս, շատ ուշ է», քրթմնջում էր նա: Վերջապէս նա մօտեցաւ երեխային, քննեց նրա պարանոցի ուռույցքը և տեսնելով հերիւնի պատառուածք երեխայի պարանոցի վերայ՝ մի դառն ժպիտ անցրաւ շրթունքների վերայ:

— Ո՞վ է հերիւնով արիւն հանել երեխայի



ուռուցքից, հարցրաւ նա ներկայ եղողներին: Նրանք ցոյց տուին մահտեսի Յարութիւնին: Բժիշկը կանգնեց և մի բարկացալտ հայեացք ձգելով նրա վրայ հարցրաւ.

— Երեք հիւանդներին էլ դ՞ու էիր բժշկում:

— Այո՛, երկիւղով պատասխանեց մահտեսին:

— Քանի՞ օր է, որ յանձն ես առել հիւանդների բժշկութիւնը:

— Երկու, պատասխանեց նա:

— Ո՛չ, ութերորդ օրն է այս, մէջ մտաւ Աշոտը, մահտեսին չէ կամենում ճշմարիտը խօսել:

— Պարոն, բարկութեամբ դարձաւ բժիշկը դէպի մահտեսին, դու իշո՞ւմ ես, որ մենք միանգամ էլ պատահեցինք միմեանց հետ և ես քեզ հրամայեցի չը յանդգնել այնուհետև բժշկութիւններ անել, իսկ դու մոռացել ես իմ խօսքերը, լա՛ւ, ես այժմ քեզ հետ ուրիշ կերպ կը վարուիմ:

Մահտեսի-Յարութիւնը գունաթափվեցաւ, իսկ դճկտօրը վերարկուն առնելով բարկացած և անխօս դուրս գնաց:

Վարպետ Սարգիսը, Խաթունը և Աշոտը վազեցին նրա ետևից և առաջը առնելով խնդրում էին, որ եթէ չէ կամենում դեղատոմս գրել, գոնէ յայտնէ նրանց թէ հի-

ւանդները կ'առողջանան թէ ոչ:

— Երեքին էլ վաղը կը թաղէք, դառնութեամբ պատասխանեց բժիշկը և դուրս գնաց բակից:

Խաթունը և վարպետ Սարգիսը մնացին արձանացած և ակնապիշ նայում էին միմեանց, իսկ Աշոտը սկսաւ թուլանալ և ընկաւ դրան քարի վերայ: Ծնողները և հարսները մեծ ջանք գործ դրին մինչև որ նրան ուշքի բերին: Այսուամենայնիւ նա դեռ թմրած նստել էր քարի վերայ և երկար չէր շարժվում այն տեղից: Նա անզգայ էր թէ ծնողաց և թէ իւր հարսների աղաչանացը, նա ոչինչ չէր լսում: Բայց մի քանի վայրկեանից յանկարծ նա տեղից վեր թռաւ, յափշտակեց գետնի վրա ընկած վանդակի ձողը և խելագարի պէս վազեց տուն. «Ո՛ւր է այն անզգամը, կատաղութեամբ գոչում էր նա, նա սպանեց այս խեղճերին, ես էլ նրան պէտք է սպանեմ»: Նա որոնում էր մահտեսի Յարութիւնին, բայց նա վաղուց փախուստ էր տուել նրանց աչքից:



Ը.

Դեկտեմբերի ձմեռային առաւօտ էր: Քաղաքի արևելեան հորիզոնը ամփոփող լեռանց ետեւից դեռ նոր ծագել էր արեգակը և բարձրանում էր անամպ և վճիտ երկնակամարի վերայ: Նրա ջերմութիւնից զուրկ ճառագայթների առաջ շողշողում էին տների սրածայր ձիւնապատ տանիքները: Բոլոր քաղաքը արդէն իւր սովորական շարժողութեան մէջ էր:

Այս միջոցին արհեստաւորների թաղում վարպետ Սարգսի տունը ներկայացնում էր մի անսովոր կերպարանք: Նրա բակի և տան մէջ խռնուած էր խառնիճաղանճ ամբոխ: Այստեղ, այնտեղ երևում էին խաչվառներ, մոմեր, աշտանակներ, սրոնք մի տեղից միւս տեղ էին փոխադրում. լսվում էին բուրվառների շաչիւն քահանաների հաստ և համոզկեր ձայներ, իսկ սենեակների ներսից ողբ և լաց...

Բայց ի՞նչ է պատահել այստեղ: Մեր երեք հիւանդները նոյն գիշերը աւանդել էին իրանց հոգիները մէկը միւսից մի քանի ժամ յետոյ: Սարսափելի դժբաղդութեան լուրը մի ըուպէում տարածուել էր ամբողջ թաղի մէջ և ժողովել այստեղ ահագին բազմութիւն: Թէ

դրացի, թէ բարեկամ և թէ օտար սարսափով էին լսում հասած դժբաղդութեան մանրամասնութիւնները և ամենքը այս մի առանձին երկնային պատիժ էին համարում իրանց խրատելու համար Աստուծուց տուած: «Մարդիկ մեռնում են, ասում էին նրանք, բայց այսպիսի թշուառութիւն մինչև այսօր տեսած չունէինք: Մայր, աղջիկ և տղայ, երեքը միասին, միևնոյն գիշերի մէջ մեռած, ո՞վ է տեսել կամ ո՞վ է լսել... Ի հարկ է սա մի երկնային պատիժ է»:

— Ընդհակառակը մի երկնային բարութիւն, պատասխանում էր մի քանիսին վարպետ Սարգսը. որովհետև այսպիսով Աստուած կամեցել է միանգամից ազատել հանգուցեալներին այն անողորմ լութէրականի ձեռքից: Նա խօսում էր ոսկերիչ Գրիգորի մասին, որը մինչև անգամ ոչինչ չը գիտէր դեռ իւր ընտանեացը հասած դժբաղդութեանը մասին:

Նախընթաց գիշերը ոսկերիչը անցրել էր քարոզիչ Աւետիքի տանը և դեռ առաւօտը տուն չէր վերադարձել: Իսկ քարոզիչը որովհետև վաղ առաւօտ շուկան էր դուրս եկել պաշարեղէն գնելու համար, այդտեղ նա լսել էր ոսկերչի կնոջ և որդկերանց մահը: Այդ լուրը նրա վրայ շատ վատ ազդեց: Բայց սառ-



նութեամբ և հեռատեսութեամբ դործելն իւր սովորութիւնն արած լինելով՝ նա չ'ալլալլուեցաւ, այլ իսկոյն և եթ «եղբայրներից» մի երկուսին զրկեց տուն, որ Գրիգորին զբաղեցնեն մինչև իւր տուն դառնալը: Յետոյ մի քանի հոգու համար գնած իրեղէնների վերայ դարձեալ պաշար աւելացնելով՝ յանձնեց ծառային և պատուիրեց նրան տասն և երկու հիւրերի համար ճաշի պատրաստութիւն տեսնել: Այս ամենից յետ ինքը շտապեց պատուիրին և միւս «եղբայրներից» մի քանիսին տեսնելու:

Մի ժամից յետ նա վերադարձաւ ութ հոգի էլ իւր հետ ունենալով: Նա ոսկերչին յայտնեց, որ այսօր մտադիր է մի փոքր խընճոյք սարքել, որովհետև իւր քարոզիչ նշանակուելու տասներորդ տարին հէնց այդ օրը լրացնում է: Իսկ վաղը, աւելացնում էր նա, քեզ հետ միասին շատ առաւօտ պիտի ճանապարհուինք Ծառաձագ գիւղը մեր հօտին վերաբերեալ մի քանի գործերի համար: Ոսկերչիչը գովեց նրա մտադրութիւնը և պատրաստակամութիւն յայտնեց իւր կողմից նրան հետևելու:

Քարոզչի անգութ մտադրութիւնը հետեւեալն էր: Նա կամենում էր այդ հնարներով

նոյն օրը ոսկերչին զբաղեցնել, այնպէս որ նա չը կարողանար դուրս գալ և կնոջ ու որդիերանց մահը լսել, իսկ իւր տունը, նա համոզուած էր, ոսկերչին փնտռելու համար եկող չէր լինիլ. յետոյ վաղ առաւօտեան նա, պատօրի խորհրդով, ոսկերչին առած կ'երթար Ծառաձագ, որ քաղաքից վաթսուս փարսախ հեռաւորութիւն ունէր: Նա այդտեղ գանազան պատրուակներով ոսկերչին պիտի ուշացնէր մի ամիս, իսկ այդ միջոցում պիտի նախապատրաստէր նրան իւր ընտանեացը հասած դժբաղդութեան գոյժը հէնց այդ գիւղում առնելու, ըստ որում, պատօրի ասելով, եթէ նոյն օրը յայտնուէր նրան այդ քանը, «Տիրոջ» հօտի համար կարող էին վնասակար անպատեհութիւններ տեղի ունենալ:

Բայց պատօրից ու քարոզչից նախատեսուած հաշիւները «եղբայրներից» մի քանիսը խանգարեցին: Քարոզչի տուն հասնելուց մի քանի ժամ յետոյ ոսկերչիչը պատահամբ կամեցաւ դուրս գնալ պատշգամ: Նա դեռ սոքը պատշգամը հանող դրան չէր կոխել, երբ պատշգամում մի գաղտնի խօսակցութեան շուկ զարկաւ իւր ականջին: Նա իբր կատակ հետաքրքրեցաւ լսել, ուստի անշարժ իւր տեղը կանգնելով՝ ականջը ուղղեց դէպի



շնչող կողմը և որոշակի լսեց հետևեալը:

— Ճշմարիտ, որ երեքն էլ վախճանվել են, հարցնում էր «եղբայրներից» մէկը:

— Այո՛, թէ կինը, թէ աղջիկը և թէ որդին:

— Երեքն էլ այս գիշեր, զարմացմամբ հարցնում էր մի իրկրորդը:

— Այո՛, երեքն էլ այս գիշեր:

— Իսկ «եղբայր» Գրիգորը ոչինչ չը գիտէ:

— Ո՛չ, նա այս գիշեր այստեղ է անցրել...

Ոսկերիչը այլ ևս չը կարողացաւ լսել, նրա գլուխը պըտտեցաւ, աչքերը սկսան մթագնել, նա գոչելով դուրս գնաց պատշգամբ. — «Ո՛ւմ համար էք խօսում այդ ի՛նչ է պատահել, ո՞վ է մեռածը, ինչո՞ւ ինձնից ծածկում էք, կինս, որդիքս...» — նա դողալով և գունաթափ հետզհետէ հարցեր էր անում նրանց: Բայց «եղբայրները» յանկարծակի գալով ոչինչ չէին կարողանում պատասխանել նրան, այլ շուարած նայում էին:

Ոսկերիչը գժուածի պէս մտաւ տուն, նա պատահեց քարոզչին իւր ընդունարանում. — «Այս ի՛նչ են խօսում: Աւետիք, գոչեց նա դէպի քարոզիչը, ո՞ւր է կինս, ո՞ւր են որդիներս, նրանք մեռել են... տար ինձ նրանց մօտ, տար ինձ... Դուք ինձ քնացրիք, դուք ինձ

ամեն բան մոռացնել տուիք; տա՛ր, ասում եմ, ինձ նրանց մօտ...»: Այս ասելով նա բռնի քաշեց քարոզչի թևից և առաջը ձգեց:

Ի՞նչ ես անում, ա՛յ մարդ, սպասիր, ես ոչինչ չը գիտեմ, ո՞վ է մեռել...

— Ո՞վ է մեռել, կատաղութեամբ գոչեց ոսկերիչը, կինս, որդիքս, ասում եմ քեզ... Արի՛, արի, տա՛ր ինձ նրանց մօտ, ես միայնակ չեմ կարող գնալ...

Ոսկերիչի և քարոզչի ձայների վերայ ներս թափուեցան «եղբայրները» և տեսնելով թշուառ մարդու մինչև կատաղութեան հասած այլայլմունքը՝ խորհուրդ տուին քարոզչին ընկերանալ նրան գէթ միջև իւր տունը:

Քարոզիչը երկիւղից դողում էր, սակայն հարկ էր տուած խորհուրդը ընդունել: Նա և ոսկերիչը դուրս գնացին: Վերջինս պինդ բռնած էր քարոզչի թևից և արագութեամբ ու հատկապէս շնչով առաջ էր գնում, միշտ ետևից քարշ տալով ընկերոջ:

Ճանասպարհը շատ երկար չէր: Նրանք մտան թէ չէ այն փողոցը, որի ծայրում շինուած էին ոսկերիչի ու իւր դրացի վարպետ Սարգսի տները, և ահա՛ լսուեցան հոգևոր երգեցողութեան ձայներ:

— Գանգնիր այստեղ, հրամայողական ձայ-



նով դարձաւ ոսկերիչը դէպի քարոզիչը, և նրա թւեից քաշելով իւր հետ կանգնեցրաւ մի ցանկապատի տակ: Երգեցողութեան ձայները հետզհետէ մօտենում էին: Աերջապէս փողօցի անկիւնից երևեցան մոմերը և խաչվառնե-րը, յետոյ երգեցող մանկտին, քահանաները, և վերջը խուռն բազմութիւնը արհեստաւոր-ների և մանր վաճառականների, որոնք կրում էին երեք թշուառների դազաղները: Ոսկերիչը այս ամենը տեսնելուց, լայն բացած աչքերով, որոնց մէջ հանկարծահաս թշուառութեան գոյժը ցամաքեցրել էր արտասուաց աղբիւր-ները, անզգայաբար առաջ գնաց դէպի դա-զաղները: Բայց այստեղ նշմարելով իւր միւս երկու փոքրիկ որդիներին, որոնք կողկողա-գին լալիս էին մէկը մօրը և միւսը քրոջ դա-զաղներից գրկած, իսկոյն սոսկալով և սարսա-փած լետ դարձաւ դէպի քարոզիչը և գոչեց. — «Նրանք են, կինս և երեխաներս, դու և ես՝ երկուսս միասին սպանեցինք նրանց...»: Այս ասելով նա կանգնեցաւ իւր առաջի տեղը, վերցրաւ գտակը, նոյնը անել տուաւ և քա-րոզչին և սպասում էր յուզարկաւորութեան անցնելուն: Երբ հանդէսը մօտեցաւ, նա կըր-կին խելագարի նման վազեց դէպի դազաղնե-րը. — «Այդ ուր էք տանում, իմ կինը և որդիներ

ըր... թողէք որ խօսիմ նրանց հետ...»: Այս ասելով նա կամենում էր ընկնել դազաղների վերայ, բայց նրան արգելեցին: «Հեռու, հեռու այստեղից, թշուառական, սպառնալից դէմքով դարձաւ դէպի՝ նա քահանաներից մինը, այդ անիծեալ ձայնովդ այժմ էլ սրանց մահուան հանգստութիւնն ես կամենում վրդովել»: Ոս-կերիչը սրտաբեկ և զուճաթափ լետ դարձաւ և ցանկապատին յենլով մրմնջում էր. «Այն էս անիծեալ եմ... տէր-հայրը իրաւունք ու-նի... ես անիծեալ եմ»...

Այս տեսարանը շատ մորմոքիչ ազդեցու-թիւն արաւ ժողովրդի վերայ, նրանցից շատե-րը խղճահարվում էին ոսկերչի թշուառ դրու-թեան վերայ: Բայց կային երիտասարդներ, որոնք չը կարողացան ճանաչել նրա հոգու վշտահար դրութիւնը և կարծեցին թէ նա կամենում էր բռնի իւր ննջեցեալները խլել իրանց ձեռքից ուստի — «մենք դառնալուց քեզ ցոյց կը տանք անզգամ» կամացուկ սպառ-նում էին նրանք՝ առանց այն էլ հարուածի սաստկութեան տակ կործանուած թշուառա-կանին:

Բայց ոսկերիչը լուռ և անզգայ էր իւր դէմ ուղղուած բոլոր հայեացքներին ու սպառ-նալիքներին: Նա այնքան սպասեց այնտեղ,



մինչև որ յուղարկաւորութիւնը անցաւ և յետոյ ապուշ-ապուշ հարցրաւ քարոզչին.

— Այս ննջեցեալները ճանաչեցիր դու:

— Ճանաչեցի, ցած ձայնով պատասխանեց նրան քարոզիչը:

— Նրանք իմ կինը, աղջիկս ու որդիս էին, գիտե՞ս:

— Գիտեմ:

— Լաւ ուրեմն, տա՛ր այժմ ինձ իմ տունը: Քարոզիչը հնազանդվեցաւ: Երբ նրանք հասան տուն, ոսկերիչը դարձաւ քարոզչին:

— Այժմ դու կարող ես զնալ:

— Իսկ դո՛ւ, հարցրաւ քարոզիչը:

— Ես պէտք է մնամ իմ տանը:

— Իսկ «եղբայրների» մօտ երբ կը գաս...

«Եղբայրներ» բառը ցնցեց ոսկերչին ամբողջ մարմնով, նա կատաղութեամբ յարձակուեցաւ քարոզչի վերայ. «Ի՞նչ դեռ համարձակվում ես ինձ մօտ այդ անիծեալ անունը կրկնելու. — այս ասելով նա երկու ձեռքով բռնեց քարոզչի մազերից և ուժգին գարկաւ մօտ եզող պատին:

Քարոզիչը մի ճիչ արձակեց և գլորուեցաւ գետին:

— Այդ դեռ շատ փոքր է, կատաղութեամբ գոչեց ոսկերիչը և վազեց վերցնելու բակի

մէջ ընկած որձաքարի բեկորը: Բայց քարոզիչը մի ակնթարթում վերկացաւ ընկած տեղից և բակի ցանկապատի վրայով թռաւ փողոց: Ոսկերիչը յետ դարձաւ, բայց նրա փախչելու ոտնաձայնը միայն լսեց:— «Ես ուրեմն սատանաների հետ գործ ունէի մինչև այժմ», ասաց նա և քարը ձգեց գետին: Յետոյ մի փոքր լռելով՝ շարունակեց դողացող ձայնով. «Բայց ո՞վ է մեղաւորը, ի հարկէ ես, միմիայն ես անզգամս: Ի՞նչ ունէի ես այդ զւեղի հետ. այդ անգուլթ, այդ անսիրտ խաբեբաների հետ. ինչո՞ւ շուտով չճանաչեցի նորանց. ինչո՞ւ խելքս կորցրի. ինչու իմ ընտանիքը մոռացայ... իմ կինը. իմ գաւակները...: Հա, դու քեզ համար նոր հաւատ էիր որոնում, թշուառական. շարունակում էր նա ինքնիրէն խօսելով, դո՛ւ, որ մի խեղճ արհեստաւոր էիր և իսկապէս չգիտէիր թէ՛ սրոնք էին քո հաւատի պահասութիւնները և որոնք էին ուրիշներինի առաւելութիւնները: Քո պապերի հաւատով դու քեզ բաւական երջանիկ չէիր զգում. նրանով քո ընտանիքը բաւական բաղդաւոր չէր. թէ՛ կամենում էիր յանկարծ արքայութիւն մտնել... զնա՛ այժմ, ա՛նմիտ. զնա՛ և տես, ո՞ր դժոխքը սորանից աւելի սարսափելի է. ո՞ր դժոխքը սորանից աւելի խիստ հարուած-



ներ կարող էր տալ քեզ...» Այս ասելով նա անխնայ հարուստում էր իւր գլուխը: Յետոյ նա երերուելով նստաւ դրան քարի վերայ և քնկաւ մտածողութեան մէջ: Երբեմն նա խորը հառաչում էր և իւր լայն բացուած ուրն-գուքներէց, ինչպէս ծուխ, դուրս էր փչում իւր ներսում կրակուող շունչը. երբեմն նա ցնցում էր գլուխը և կատաղաբար շարժում օդի մէջ իւր բռունցքները կարծես իւր առաջ մենամարտողների բանակ ունէր կանգնած. և երբեմն յուսահատ և սրտաբեկ գլուխը խոնարհում էր կուրծքի վերայ և այնպէս մնում երկար ժամանակ: Վերջապէս նա նորէն սկսաւ ինքնիրեն շշնջել. «Բայց մի՞թէ ես մեղաւոր եմ. մի՞թէ ես գիտութեամբ արի այդ ամենը. երբէք: Ես մինչև այժմ էլ չգիտեմ թէ ինչպէս եղաւ որ այդ խաբեբաների որոգայթի մէջ բռնուեցայ, չգիտեմ ինչպէս եղաւ որ իմ Մարիամին իմ երեխաներին մոռացայ. այո՛, ես ոչինչ չգիտեմ. այդ ամենը ինձ համար բոլորովին անհասկանալի ձևով կատարուեցան, այո՛ անհասկանալի, ես ոչինչ չիմացայ, ես ոչինչ չգագայի. այդ դեւերը ինձ կախարդեցին, այո՛ ես մեղաւոր չեմ...» Այս ասելով նա լռեց մի փոքր ժամանակ և յետոյ նորէն սկսաւ. «Բայց ի՞նչպէս թէ մեղաւոր

չեմ. ես չէի՞ որ երբ առաջին անգամ կամենում էի գնալ այն խաբեբայ Կարօի տունը և Մարիամը եկաւ ինձ արգելելու. նա բռնեց իմ ձեռքից, նա խնդրում, աղաչում, և արտասուում էր որ ես նրա մօտ գայի, բայց ես, ո՛հ, ես անզգամս վայրենութեամբ մի կողմը բերեցի նրան և դուրս փախայ... Ես չէի՞ որ չորս տարի շարունակ տանջեցի նորան՝ արգելելով կատարել իւր հաւատոյ վերաբերեալ պարտաւորութիւնները. և վերջապէս ես չէի՞ որ սպանեցի նորան և նորա հետ էլ իմ երկու զաւակներին...»: Այսպէս խօսելով նա վեր թռաւ նստած տեղից և շարունակեց յուսահատ կատաղութեամբ. «Ոչ. ոչ. ապրել այսուհետև անկարելի է. և ո՛ւմ համար պիտի ապրեմ. Մարիամը մեռաւ և տարաւ իւր հետ աղջիկս և որդիս. մնում են երկու փոքրիկներս. թո՛ղ նոքա էլ թշուառանան... իմ բարեպաշտ հայրը իւր գերեզմանում անշուշտ անիծեց ինձ իմ անիրաւութեանց համար. ուրեմն իմ անունը պիտի ջնջուի. իմ տունը հիմնովին պիտի կործանուի, որպէս զի իմ պատիժը կատարեալ լինի... այո՛, ես արժանի չեմ Աստուծոյ արևը տեսնելու, նորա օգը շնչելու. և ես փոխանակ քարոզի գլուխը պատին զարկելու ինչո՞ւ իմը չեմ զարկում...»



Այս ասելով նա կատաղաբար առաջացաւ դէպի դուռը և ձախ երեսով սաստիկ խփուեցաւ տան պատին, նրա դէմքը ընդհարուելով քարի հետ պատառոտեցաւ և քիթից սկսաւ հոսել յորդ արիւն:—«Ո՛հ, այսպէս չէ կարելի շուտ մեռնել, այնպէս շուտ՝ որ իմ կնոջը ու երեխաներին հասնեմ, ես գիտեմ թէ ի՞նչպէս պէտք է մեռնել...»: Այս ասելով նա ներս մտաւ տուն: Առաջին անգամ նրա աչքին զարկաւ նախազաւթի մէջ կշռքի համար կախուած չուանը:

«Ահա, գոչեց նա խելագարուածի պէս, ահա մեռնելու յարմար միջոցը»... Եւ նա առանց ուշանալու բարձրացաւ գաւթի անկիւնում դրուած սնդուկի վերայ, քաշեց իւր մօտ առաստաղից կախուած չուանը և նրա վրայ կրկնածալ հանգոյց շինելով՝ անցրաւ պարանոցը.—«Այժմ ես ձեզ հետ եմ, սիրելիներս»... Այս ասելով նա թափ տուաւ ոտքերին և շրջելով կախուեցաւ օդի մէջ... Երկու անգոր ցնցումներից լետ լրթագոյնը պատեց նրա երեսը, բերանից ու ունդուններից սկսաւ ժայթքիլ խեղդուող արիւնը և մի խուլ հռնդիւնից լետ... նա հոգին փչեց...

Յուզարկաւորութեան ժամանակ ոսկերչին սպառնացող երիտասարդները տուն դառնա-

լով բոլորը միասին վճռեցին գնալ նրա մօտ և երեք զոհերի վրէժը հանել նրանից...

Բայց նրանց գալրոյթը փոխուեցաւ սարսափի, երբ նրան կախուած գտան նախազաւթի մէջ:

Հայ անյիշաչար հոգևորականութիւնը առաւ բողոքականութեան չորրորդ և աւելի թշուառ զոհի մարմինը և ամփոփեց իւր ընտանեաց հանգստարանում...

Իսկ մեծապատիւ պատօրը շատ անտարբերութեամբ լսեց այս բոլոր թշուառութեան պատմութիւնը և միայն վերջումը բարեհաճեց ասել որ՝ «ոսկերիչը յիմարութիւն է արել իրան խեղդելով»:

Ոսկերչի երկու որդիներին իւր հովանաւորութեանտակ առաւ վարպետ Սարգիսը, իսկ նրա ունեցած երեք հազար ռուբլին, որը պատօրի ձեռքով ղրկուած էր մայրաքաղաքի բանկը շահեցնելու, մինչև այսօր էլ չ'իմացուեցաւ թէ Աստուծոյ որ պաշտօնեայի գրպանը մտաւ...











2013

14343



